

Hentchak :

Organe Central
DU PARTI

S.-D. HENTCHAKISTE

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien
mensuel

XXVI Année

Adresse Télégraphique :
Հեռագրի հասցե բոլոր
երկրների համար
“HENTCHAK” Paris

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ Ս.-Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՊՐՈՒՆՈՒԹԵԱՆ ԳԵՄ

Հայ օրինական մարմինները, Ազգային Ժողովը, այն մարմինները, որոնք պատմութեան ընթացքում գաղափարները և արտաքին ազդակների շնորհիւ երեւան են եկել և Հայ Ազգութեան Ներկայացուցչութիւնը կազմել, փոյթ չէ թէ դա ցանկալի ռամկավարական Հիմունքները դեռ ունեցած չլինէր, բայց նրանք՝ որ առհէ՛ն կան, գործում են և ճանչցուած են որպէս Հայ օրգանական կեանքի պաշտօնական արտայայտութիւն, — ահա դրանք ի՛նչ զիրք պիտի բռնեն ներկայումս Հայկական Խնդրի վերաբերմամբ, ի՛նչ ուղեգիծ, ի՛նչ վարուելակերպ նրանք պիտի ունենան դէպի Կառավարութիւնը և դէպի այն պետութեանց ներկայացուցիչները, որոնց ձեռքին է գրանուած իրականօրէն Թիւրքիայի բախտը, նրա ներքին պետական գործերը այս և այն ուղղութեամբ տնօրինելու գործը:

Օրինական Հողի վրայ կանգնած այդ մարմինների ընթացքը պիտի բղիթ իրականութիւնից, օրինականութեան տուած Հիմունքներից, նա Համապատասխան պիտի լինի մէջտեղ եկած այն պահանջներին, որոնք արդիւնաւոր, Հետեւանք են Թիւրքիայի մէջ արդէն տիրող իրերի բնատրութեանը:

Եւ ի՛նչ է այդ օրինականութիւնը, այդ իրականութիւնը:

Այլևս անվիճելի, ցայտուն, անհերքելի ճշմարտութիւն է, որ տնտեսապէս անկախ Թիւրքիա գոյութիւն չունի: — Մըր, ինչո՞ւ է այդպէս եղած, լա՞ւ է դա, թէ՞ վատ, Հարցը դրանց շուրջը չի պտտում, այլ այն՝ որ նա չկայ, որ այդ պայտուս է, որ երկար տարիներից ի վեր իրերը միայուն այդ բնատրութիւնը ունեն:

Տնտեսապէս անկախ Թիւրքիա չլինելով, որպէս եղրակացութիւն, տրամաբանօրէն և իրականօրէն չկայ այս բոպէիս և՛ քաղաքականապէս անկախ Թիւրքիա: Թիւրքիան գուրկ է պետական

միահեծանական ստորոգելիներից: Իս չկայ: — Արդարութիւն է, թէ՞ անարդարութիւն, իրաւունք է, թէ՞ ոչ-իրաւունք, դա էլ կապ չունի ինդրի Հետ. բաւական է, որ այսօրուայ իրականութեան մէջ նա չկայ: Թէ՛ դա ի՛նչպէս եղաւ, դրա Հետեւանքը օգտակար թէ՞ վնասակար է այս ու այն կողմին կամ ամբողջին, — այդպիսի Հարցեր միայն որպէս պատմական լուսաբանութիւններ կարող են ծառայել ներկայ իրականութեան յառաջացման կանխապայմանները բացատրելու համար, ուրիշ ոչինչ: Բայց դրանք չեն գալ ժխտելու այն՝ ինչոր կայ, ինչոր գոյութիւն ունի:

Օսմանեան պետութեան ամբողջութիւնը պահպանելու քաղաքականութիւնը (politique d'intégrité) և նրա ներքին գործերին միջամտելու իրաւունքը (politique d'intervention) երկու սկզբունքներ են եղած, որոնք պատմութեան ընթացքում, փոխն ի փոխ, նայելով բոպէի դասաւորուած շահերին, եկել են ասելու, Հաստատելու որ Թիւրքիայի սեպհական բախտի տնօրինութիւնը ո՛չ թէ իր ձեռքն է, այլ Եւրոպական Ներգաշնակութեան:

Իս իրականութեան մի կողմն է:

Միւսը. — այդ երկրի մէջ բազկացուցիչ ազգութիւնները ունեն պատմական իրաւունքներ, սեպհական, ազգային կազմակերպութեան օրգանական որոշ օրէնքներ (statut): Ո՞րտեղից և ի՛նչ պահանջներից դրանք յառաջացան. — պարզ իրողութիւնն այն է, սակայն, որ նրանք կան, մտած են օսմանեան պետական կազմի մէջ, նրա մի անանջատ մասն են կազմում և ընդունուած, ճանչցուած են Արտաքին Պետութիւնների դաշնադրութիւններովը: Եւ այդ բոլորը գրանուած են Միջազգային վերահսկողութեան տակ: Այդ տեսակէտով ժամանակակից Թիւրքիան, միջազգայնացած է:

Օրինականութեան վրայ կեցած Հայ Ազգային Ժողովը, Ազգային Ներկայացուցչութիւնը բաց է ի բաց, որոշ, դրական կերպով, առանց աջ ու ձախ նայելու, որպէս իրաւունք և պարտականութիւն, այդ օրէ-

ն ա կ ա ն ու թ ե ա ն վրայ պիտի կանգնի՝ ահա՛, պատմական այս օրերի մէջ, որպէսզի անցեալի սխալները չը կրկնուեն:

Այս Հինգերորդ տարին է, որ Հայ ժողովուրդը գտնուում է իր նախկին բացառիկ դրութեան մէջ: Արիւնը հոսում է անպատիժ կերպով: Ոճիրները օրինական կեանքի մի մասն են կազմում: Որոշ կերպով կայ մի հզօր ձեռք, թելադրիչ ոգի, որ իր գործունէութեան, իր ներքին հետապնդումների կէտ նպատակին է արել Հայ ժողովրդին սպառել, տկարացնել, չքացնել, իրաւազրկել, թոյլ չտալ, որ նա իր երկրի մէջ արժատ բունի: Ո՛չ միայն տիրող աւատականութեան մնացորդները չը ջնջուեցան, ո՛չ միայն որոշ դիտումներով ղեկավարուող աւագակութիւնները արժատախիլ չեղան, այլ դրականօրէն նրանց ոչժ տրուեցաւ, կանխամրտածմամբ նրանք խրախուսանք ստացան՝ բարձրագոյն շրջաններից: Գրդին հայի դէմ հանելու, քրդերով հայերին ջարդելու, զսպելու քաղաքականութիւնը նորից իր ամբողջ թափովը մէջտեղ եկաւ: Կոտորածի մահասարսուռը ամենուրեք է:

Յանձնաժողովներ կազմուեցան, — քանդուեցան, առանց որ և է արդիւնքի: Ուսումնասիրութիւններ եղան, ծրագրեր մշակուեցան, — բոլորն էլ անհետեւանք: Ու հայասպանութիւնը շարունակուեց:

Եւ այսօր, կառավարութիւնը Հողային Խնդիրը վարչակազմի նախնապէս լուծելու հրահանգ, որոշումներ է մէջտեղ գործում, որի էութիւնը մի կատարեալ ծաղր է ընդդէմ պրկուած հայի:

«Նահանգային բարեկարգութիւնների» նրա այժմեան ծրագրեր ուղղակի մաքքիավերական մի յղացում է:

Ու այդ բոլորից յետոյ, երբ Հայ Ազգային Ժողովի ծոցից բղխած պատգամաւորութիւնն է ուզում ներկայանալ ներքին գործոց նախարարին, — նա մերժում է, չէ ընդունում՝ ասիական կոպտութեամբ:

Ժողովը՝ որոշում է դիմել մեծ եպարքոսին՝ դարձեալ նոյն խնդրերով: Հետևանքը ի՞նչ պիտի լինի:

Դրա բանալին մեզ տալիս է Սիւրիան:

Սիւրիայի ազգաբնակչութիւնը, առանց ազգի և կրօնի խտրութեան, ամենայն իրաւամբ, պահանջում է ինքնապաշտպան, դարբացման, յառաջադիմութեան, իր ներքին սեպհական գործերը տնօրինելու տարրական իրաւունքներ: Անջատողական այդտեղ ոչինչ կայ: Դա մի ժողովրդական դարձում է, որ պիտի քաջալերուէր, որովհետև այդպիսով միայն կարող էր գալ Թիւրքիայի իրական վերածնութիւնը, եթէ դա այլևս ուշ չէր:

Կառավարութեան ներկայացուցիչը լուծում է

«Բարենորոգչական Յանձնախումբը» և ժողովրդին հրամայում մտնել, մնալ այն սահմանների մէջ, ինչոր վերևից իր համար կը դուռի:

Տեղի է ունենում բողոք, ժողովրդական ցոյց: Դիմում է Մեծ Եպարքոսին: Սա կուսակալի դիրքը արդարացնում է, ժողովրդի պահանջը հակօրինական է ճանաչում, բարձրագոյնս պատուիրում է լսել, հանդարտիլ և իր ցանկութիւնները երևան բերել՝ իր սեպհական պատգամաւորների բերանով, չէ՞ որ Օսմանեան Պարլամենտը մի օր պիտի վերաբացուի և Սիւրիան էլ իր ներկայացուցիչները պիտի ունենայ այնտեղ:

Բայց Սիւրիական պատգամաւորները ո՞վ պիտի ընտրի, — ընդհանուր, հաւասար, գաղտնի, ուղղակի՞ քուէարկութիւնը. — ոչ: Այդ մասն էլ կը հոգայ «Բոտիհատը» և կամ նրա ներկայացուցիչ կառավարութիւնը:

Այն հեղնութիւնը որ տեղի ունեցաւ Սիւրիական իրականութեան հանդէպ, նոյնը պիտի կրկնուի հայկականի էլ վերաբերմամբ, իր էութեան մէջ, — արտաքին երանգաւորութիւնը նշանականութիւն չպիտի ունենան:

Թուրք ղեկավարիչ շրջանները չեն, որ անցեալից դաս պիտի առնեն: Նրանց համար օրը օրին ապրելու խնդիր կայ միայն: Կոճիկացած, ընկնելիք դասակարգի հոգեբանութիւնը, վարուէլակերպը ուրիշ կերպ չի կարող լինել:

Եւ արդարև, այն ահարկու ճգնաժամը, որի առաջ կանգնած է Թիւրքիան, նրա ղեկավարիչ դասակարգը, նրա կառավարութիւնը ո՛չ թէ ռամկավարական, արժատական, իրերի խսկական պահանջին համեմատ լուծումների յետևից է ընկած, այլ կոյրի պէս դարձեալ ձեռք է առած իր հին մեթոտները: Նորից հողային, քաղաքական ազդեցութեան, տնտեսական շահագործութեան զիջումներ այս և այն պետութեան, որպէսզի նրանց լուծութիւնը, բարեհաճ կամքը ձեռք բերուի: Դարձեալ՝ ծածուկ, ձեռքի տակի, թագուն համաձայնութիւններով Թիւրքիայի այս ու այն մասը բաժին է հանուում եւրոպական շահագորդի կողմերին, փոթ չէ, որ դրանով նա մի քաջ աւելի մօտենար իր գերեզմանին, բաւական է որ կառավարողները իրենց արդիւնաւոր պաշտօնները պահեն և առատ ոտճիկներ ստանան: — Թիւրքիայի ղեկավարիչները իրենք առաջին և գլխաւոր ազդակն են, որ այդ երկիրը դէպի անկումն են տանում:

Ու սրանից յետոյ՝ ի՞նչ պիտի լինի Ազգային Ժողովի, Հայ Ազգի ներկայացուցչութեան ընթացքը:

Սմբերու, համբերելու, լսելու, աղաչել-պաղատելու իմաստութիւնը այլևս մի կողմ պիտի դուռի: Դրա

արվիւնքը ուրիշ պարագաների և ժամանակների մէջ տեսնուած, ճաշակուած է առատօրէն:

Իրերը, որ գալիս է իրերի ստացած բնաւորութիւնից, որ Համապատասխանում է իրականութեան և ճիւղանգամայն օրինականութեան, — պէտք է լինի ան վ հ ա տ պ ա յ ք ա Ր Ո Ղ Ի, ան վ ե հ ե Ր Ճ ա Ր տ ը ն չ Ո Ղ Ի, միշտ իր արդէն ունեցած իրաւունքների և պարտականութեան վրայ կեցած:

Նախ՝ Հայաստանի մէջ կատարուած բոլոր ոճիրները, Հայ ժողովրդի կրած բոլոր զրկանքները, նրա գլխով անցած դարձած ամէն դէպքերը մանրամասնութեամբ պիտի Հաղորդուին Կեդրոնական Կառավարութեան: Փո՛ւյթ չէ՛ թող նա աչք գոցի, անտարբեր մնայ, խուլ ձևանայ և իր Հին մեթոտներից ձեռք վեր չառնի:

Յետոյ՝ այդ բոլորը նոյնութեամբ՝ ճշգրիտ վաւերաթղթերով, յատուկ տեղեկագրերի ձևերով, Ազգային Ժողովից բղխած Յատուկ Յանձնախմբի միջոցով միշտ ղեկուցանել, ի զիտութիւն, եւրոպական պետութեանց Կ. Պօլսոյ ներկայացուցիչներին: Սա օրինականութիւն է և իրաւունք:

Մենք չենք որ այդ ղեկուցումների ճիշդ արժէքը չգիտենք: Բայց դա պէտք է լինի, որովհետև դա անհրաժեշտութիւն է և Համապատասխան է իրերի պահանջին:

Երբ իրերը այդ ուղղութեամբ երթան, բնական բերմունքով, մնացածը իր ժամանակին կը գայ:

ՕՍՄԱՆՅՈՒԹԵԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Օսմանցիութեան գաղափարը ժամանակակից է Ազգերի ձուլման քաղաքականութեան սկզբնաւորութեանը: Նա ծնած է այն օրից, երբ օսմանեան տիրապետողները ուրիշ ելք չգտնելով պետութեան Հիմունքների ամրապնդուելուն, եկել են այն եզրակացութեան, որ միակ ապահով և Հաստատուն միջոցն է բաղկացուցիչ Ազգերը ձ ու լ ե լ և նրանցից մ է կ մ ի ու թ իւ ն, մէկ ազգութիւն կազմել:

Եւ իրօք, այդ գաղափարը յառաջացել է թուրք քաղաքագետների մէջ դեռ 30-ական, 40-ական թուականներից, երբ Եւրոպայի մէջ ճնշուող ազգութիւնները ազատագրութեան էին ձգտում:

Հարուածը Թիւրքիայում մի օր չանդրադառնալու Համար՝ Հարկաւոր էր որ ձուլումը յառաջանար, քանի որ հը պ ա տ ա կ միւս ազգերը դեռ վերագարթումի առանձին նշաններ չէին ցոյց տուել: Նամանակնայ որ արդէն տեղի էր ունեցած յունական, սերբիական, ռումանական զօրութեանական բաժանումը ընդհանուր դարմնից: Այդ բոլորը խթաններ էին գործի սկսելու:

Ռէշիտ, Ալի փաշաները այդ ոգով էին ասպարէզ մտել, նրանց ներքին քաղաքականութեան անկիւնաքարը այդ էր

եղած: Ու նրանք գալիս էին արտացոլացնելու, թարգման Հանդիսանալու ճաճիօրէն գործող այն ոյժերին, որոնք երևան էին եկել տիրող Թուրք Ազգութեան ծոցից:

Իսրայիլարը իր նշանաւոր արտայայտիչը գտաւ Միդհատ փաշայի մէջ, նա Չուլման, Օսմանցիութեան մաքի գաղափարակէտը, կեդրոնն է կազմում: Եթէ դեռ շատ ու քիչ տարտածութիւն կար, ամէն ինչ յիւուեց, վերածուեց իր ճիշտ սահմաններին և այնուհետև նա դարձաւ ս կ ղ բ ու ն ք:

Օսմանեան բոլոր Հպատակները կոչուած են օ ս մ ա ն ց ի ն ե Ր, — այսպէս էին, ծօտաւորապէս, յայտարարում պետական Հիմնական այն Օրէնքները, որոնք յայտնի են «Սահմանադրութիւն» անունով:

60-ական, 70-ական թուականներին այդ գաղափար-ոյժը զօրաւոր կերպով գործել է, նա դարձել է այն անկիւնաքարը, որի վրայ կառուցել են ուզել օսմանեան պետական Նոր Եկեղը:

Չկայ թուրք ազգայնական մի կուսակցութիւն, որ այդ գաղափարը իր էութեան և Հետևութիւնների մէջ ժխտի բոլորն էլ շատ ու քիչ, առաւել կամ նուազ երանգաւորումներով՝ դրան ոյժ են տալիս, տարբերութիւնը միայն գործադրութեան եղանակաւորումի մէջն է մնում:

Այդ սկզբունքի Հանգոյցը, կեդրոնաւայրը, Հնոցը ներկայանում է Իտալի-Հատականութիւնը. սա կատարի պաշտպանն է և միայն նրա գործադրութեան մէջն է տեսնում օսմանեան պետութեան գոյութեան, ամրապնդման, յարատևութեան գաղտնիքն ու գլխաւոր պայմանը:

Բաղկացուցիչ ազգութիւնների անգիտակց շըրջաններն էլ այդ գաղափարին որոշ չափով արձագանք տուեցին. նրանք թութակօրէն կրկնում էին, առանց խնդրի էութեան մէջ թափանցելու:

Յոյները, ճամաւորապէս, մինչև վերջ Հակառակեցան. նրանք շարունակեցին գործածել քաղաքական այն եզրերը, ինչոր ընթացք ունէին 1908-ից առաջ:

Թրքահայ բուրժուայիսի իդէօլօգ Հրապարակախօսները, առաջնորդները Օսմանցիութեան գաղափարով նոյն խակ ոգեւորուեցան, նրա բանաստեղծները իրենց կեղծ քնարի նիւթն անգամ դարձրին: Իսկ «քաղաքագէտ», «դիւանագէտ», «էֆէնդի», և ամէն երանգաւորումի «գործի մարդիկը» այդ օրերի մէջ «թուրքից աւելի թուրք» եղան Ալլա Հայ անունը գործածելը եթէ ո՛չ նախատինք, ամօթ, գէթ «անքաղաքակցութիւն» էին Համարում: «Մենք օսմանցիներ ենք», — սա էր արտայայտութեան սովորական ձևը: Անպիտակից Հայի ու այն ա կ ա ն ոգին դեռ ա՛յնքան ազեղ կերպով չէր արտացոլացել: Պարլամենտ գնացող «օսմանցի Հայ երեսփոխանները» ուղղակի մի մի Դանքիշտոտներ Հանդիսացան: Նրանց դերը աւելի քան տխուր եղաւ:

Տիրող Համոզումն էր, որ օ ս մ ա ն ց ի ու թ իւ ն քաղաքականութիւնը իր մէջ բովանդակած ունէր Թիւրքիայի մէջ գոնուող ազգերի իրաւահաստատութեան, ընդհանուր քաղաքացիութեան գաղափարը: Չունենալով տեղեկութիւն անցեալից, այդ գաղափարի պատմական զարգացումից, պարզամիտները և անձնական ճղճիմ Հաշիւներով առաջնորդուողները շատ շուտ ընկան լարուած թակարդի մէջ և այդպիսով բարոյիչը, տարածողը, զօրավիգը եղան այն սկզբունքի, որի միակ ձգտումը, միակ նպատակն էր ազգերի գոյութիւնը ջնջել և ազգութեան գաղափարը իր շրջուն ձևի մէջ ներկայացնել:

Հնչակեանութիւնը ճիակ Քաղաքական Կուսակցութիւնը, ճիակ գործն ոյժը եղաւ, որ ո՛չ ճիւղն տիրող Հոսանքից չքշուեց, այլ առաջին օրից իսկ ճարտական դիրք բռնեց և պայքարի դրօշը բարձրացրեց՝ ամենայն անվիճելութեամբ, նախապէս պատրաստ ամէն զոհուրութեան:

Այսօրուայ կեանքը եկաւ ցոյց տալու, որ նա չէ՛ թէ չախալուեց, այլ իր ընդգրկած ուղին, պաշտպանած գաղափարները ճշմարիտ էին և Համապատասխան իրերի բնաւորութեանը Մակերևոյթը, բաւը, արտաքին շարքը մեզ անկարող եղաւ շփոթեցնել. մենք մեր ձեռքին ունէինք պատմութեան լապտերը ու ճտանք, թափանցեցինք խորերը:

Ի՛նչ է օսմանցիութիւնը, նրա էութիւնը, ոգին, տիրող ձգտումը. որո՞նք են նրա Հիմունքները, պատմական ի՛նչ տուեաների վրայ է նա յենում, գործադրութեան ի՛նչ մի առանձին պայմաններ ունի:

Աշխատենք արագ կերպով անցնել, որքան կարելի է: Իր պաշտպանները ասում են, որ ամէն պետութիւն քաղաքական ազգութիւն ունի, օսմանցիութիւնն էլ քաղաքական ազգութեան անունն է: Ուրեմն, քանի՛ որ կայ օսմանեան պետութիւն, պիտի լինի, և կայ, օսմանեան ազգութիւն, օսմանցիութիւն, օսման նախնութիւն:

Պարզ է, որ այստեղ պաշտպանում է պետութեան և ազգութեան հոմանիշ լինելու գաղափարը: Պետութիւնը ինչ անուն որ ունի, նրա բովանդակութեան մէջ ամփոփուած ժողովուրդները բոլորն էլ այն անուն-ազգութիւնը պիտի ունենան — ասում են այդ տեսութեան պաշտպանները:

Օսմանեան պետութեան իրականութեան մէջ դա ուղղակի սոփեստութիւն է, որպէս քաղաքական Հասկացողութիւն, իսկ եթէ որպէս ձուլման ազդակ է յառաջ մղուած, — ինչոր անկառկած է — դրա դարը վաղուց անցած է, և գաղափարը իր մենք օրից ի՛սկ մեռած, ա՛յնքան որ նա չի Համապատասխանում իրերի իսկական բնաւորութեան և գոյութիւն ունեցող ազգութիւնների արդէն գրաւած ճշակութեան, պատմական դիրքերին:

Ո՛չ մի ազգութիւն կայ, որի Հիմնական Օրէնքը լինէր այդ երկրի մէջ գտնուող Հպատակներին, քաղաքացիներին պետութիւն-ազգութիւն անունով ճանաչել, — նաճանաւանդ մի քանի ազգութիւններից բաղկացած պետութիւնների մէջ: Գերմանական բոլոր Հպատակները գերմանացիներ են, գերմանական ազգութեան են պատկանում, գերման անունն ունեն՝ եզրեր չկան: Աւստրո-Հունգարական բոլոր Հպատակները աւստրո-Հունգարացիներ կամ աւստրիացիներ, Հունգարացիներ են՝ արտայայտութիւն գոյութիւն չունի: Նոյնը տեղի ունի բոլոր գոյութիւն ունեցող պետութիւնների Համար:

Եթէ Հիմնական Օրէնքների մէջ ասուած լինէր թէ օսմանեան պետութեան մէջ երող բոլոր անհասները օսմանեան քաղաքացիներ են, — դա Հասկանալի կը լինէր և միանգամայն Համապատասխան թէ՛ նորագոյն պետութեան և թէ՛ ժամանակակից իրաւունքների Հասկացողութեան գաղափարին:

Այդ ժամանակ մենք կը Հասկանայինք, որ օսմանեան պետութեան մէջ անխորախ անկարողութիւն կայ, քանի որ բոլոր անհասները, ինչ ծագում էլ ունենալու լինեն, այդ պետութեան քաղաքացիները, բաղկացուցիչ ճանախներն են:

Բայց այդպէս չէ, այստեղ սորբի տակ է աւուրում պատ-

մութիւնը, միտում նրա տուեաները, անուշադրութեան թողնում իրականութիւնը, և մէկէն առաջ է դարձում օսմանցիութեան գաղափարը, որպէս գաղափար յղացում, որպէս մի վերացականութիւն (abstraction):

Որք՞ Համար գաղափար է, այն՝ որ թուրք, օսմանցի, օսմանլի (turc, ottoman, osmanli) դրանք միևնոյն Հոմանիշները, մնող (nom générique) միևնոյն անուններն են:

Մի ժամանակ աշխարհակալող ազգը ճանչցուած էր միայն Թուրք (Տաճիկ) Հինաուրց անունով, յետոյ դրա վրայ աւելացաւ օսմանլի (ottoman). — դարձեալ տիրող նոյն ցեղը, նոյն Հարստութիւնը, նոյն տիրապետութիւնը մատնանիշող, առանց Հասկացողութեան ամենափոքր փոփոխութեան: “Թուրք” եզրը գործածող անխափր դրան փոխարինել է, կրկնութիւն չտալու Համար, և՛ “օսմանցի” բառով: Ու միթէ Օսմանը ինքը թուրք չէր, թուրք արդէն տիրող Հարստութեանը և ազգութեանը չէր պատկանում: Եթէ իր աշխարհակալողի Հանգամանքովը և ունեցած անձնական ստորոգելներովը Տիրող Տան ներկայացուցիչը իր անունը ամբողջի վրայ տարածուելու դրութիւնն է ստեղծել և Հէնց այդ պարագաներով էլ շրջապատող ուրիշ ազգերը նրա տիրապետութիւնը ճանաչել են, — դա ո՛չ պատմական եղակի երեւոյթ է, ո՛չ էլ կշիւ կարող է ունենալ գոյութիւն ունեցող ոչ-թուրք ազգերի անունը օսմանցի մակդիրով փոխարինելուն:

Կրկնում ենք. գոյութիւն ունեցող ազգերի և ո՛չ մէկի սահմանադրութեան մէջ նման արտայայտութիւն չլինելով Հանդերձ, նրանցից և՛ ո՛չ մէկը փորձել է արուեստական կան ճիշտցներով՝ օրէնքի շղարշը վրան առնելով՝ պետական այդ տեսակ գաղափարներ յառաջ քշել, այն էլ կազմակերպուած ազգերի անունները փոխելու աստիճան:

Հետեւաբար՝ “Օսմանեան Սահմանադրութեան” այդ նորածուծութիւնը թէ՛ բռնազբօսիկ է, արուեստական և թէ՛ արտայայտողը ձուլման այն քաղաքականութեան, որ երկար ժամանակներից ի վեր Հետապնդում է Թիւրքիայում:

Եթէ կայ Ֆրանսիական պետութիւն և Ֆրանսիական ազգութիւն, ինչպէս որ գերմանական, անգլիական, ռուսական պետութիւններ և նոյնանուն ազգութիւններ, — այդ եզրերը ո՛չ մի կերպ չեն կարող յարմարուել օսմանեան պետութեան մէջ երող այն իրականութեան, որի ձախողակ թարգմանն են ուզում լինել թուրք ազգայնականները:

Փրանսիական ազգութիւնը իր անունը չի ստացել Ֆրանսիական պետութիւնից: Ըստ ինքեան ապրող Ֆրանսիական մի պետութիւն չը կար, որ իր անունը տուած լինէր որոշ սահմանների մէջ ապրող ազգին կամ ազգերին: Եւ աւելի մեծ չափով — օսմանեան պարագան ի նկատի առնելով — Փրանս անունով անհատ չկար, թագաւորող կամ առաջնորդ, որ իր անունը տուած լինէր թէ՛ պետութեանը և թէ՛ ազգութեանը: Ընդհակառակը՝ Ֆրանսիական պետութիւնը եղած է արդիւնք, Հետեւաբար: Նախապայմանը, ստեղծող ոյժը եղած է Ֆրանսիական ազգութիւնը: — Եթէ օսմանեան պետութեան մէջ պարփակուող բոլոր ազգերը նախապէս ձուլուած կամ այնպիսի պայմաններից յառաջացած լինէին որ արդէն մէկ ազգութիւն կազմած լինէին. — օսմանեան պետութիւն անունը՝ որպէս նոյնութիւն ազգութեան անուն՝ շատ Հասկանալի, արամաբանական և պատմական կը լինէր, Համաձայնող իրերի բնաւորութեանը: Բայց այդպէս չէ, իրականութիւնն

այն է, որ Ազգերը (Հայ, Յոյն, Արաբ, Բուլղար) արդէն գոյութիւն ունին, որոնք աւելի Հին և աւելի բարձր ստորագելիներով են կազմակերպուած, քան թուրք ազգութիւնը: Եւ ահա պատմական ճիշտ յետին բաղկերի Տիւրք Տան ճէկ Ներկայացուցիչը գալիս է և իր անունը հարկադրիչ է ուզում դարձնել զրանց բոլորին, որպէս ընդհանուր ճնող անուն: — որոշ է որ դա ճի ժամանակավրէպ է, անհիմն ճի գաղափար, որ ընդհանուր կիրառութիւն չի կարող ունենալ, որ նախատահամուած է ճեռնելու, ինչքան էլ ճիգ թափուի, որովհետև նա իրականութիւնից բոլրամ չէ, այլ յետին ճաբերով յրացուած ճի վերացականութիւն:

— Ի՞նչ է ճեր ազգութիւնը:

— Օսմանցի:

Այդպէս կարող է յայտարարել թուրքը, և դա կլինի իրականութեան արտայայտիչը:

— Ո՞ր ազգութեան էք պատկանում:

— Օսմանեան:

Կարո՞ղ է այդպէս արտայայտուել Հայը, յոյնը, արաբը, բուլղարը: Իսկ եթէ ասի, դա չի՞ լինիլ հակառակ իրականութեան: Եթէ օսմանեան ազգութեան անդամն են, ասել է թէ Հայ, յոյն, արաբ, ազգութիւն նրանց համար այլևս գոյութիւն չունի, որովհետև ճի ճարդ ճի ժամանակ երկու տարբեր ազգութիւն չի կարող ունենալ, — դա ճի եզակի երևոյթ կլինի, կուլիս և ճիճաղելի:

Նա որ օսմանցի է, օսմանեան ազգութեան է պատկանում, ասել է թէ Հայ, յոյն, արաբ չէ, և Հայ, յոյն, արաբ ազգութեան չի կարող պատկանել: Բռնադատութիւնն էլ որոշ սահման ունի, որքան էլ որ նա վ ե բ է ի շերտերից եկած լինի՝ հրամայականօրէն:

Սահմանադրութիւնները, որքան էլ սուլթանական լինին, երբէք չեն կարող՝ կանխորոշ ճի ճրագրի գործադրութեան համար՝ իրականութիւնը փոխել, երբ սա կենսունակութիւն ունի ճանաւանդ:

— Ի՞նչ էս, ի՞նչ ազգութեան կը պատկանես:

— Փրանսիացի, կը պատասխանի ա յ ս օ ր Բրլտոնը, Բասը: Այսօր այդ անունները դարձել են լոկ աշխարհագրական, ցեղազրական արտայայտութիւն և նա համապատասխանում է գոյութիւն ունեցող իրականութեանը:

— Ի՞նչ էս, ո՞ր ազգութեան կը վերաբերիս:

— Բրլտոն, Բասը: Այդպէս կը պատասխանէին, ինչպէս պատմական վաւերացիքը ցոյց են տալիս, դեռ ճինչև 1789-ի Մեծ Յեղափոխութիւնը: Նոյն իսկ յայտնի Միրաօն ճաւեր, կոչեր ունի ուղղած Բրլտոն, Բասը Ազգերին: Եւ երբեմնի այդ ազգերը այսօր դարարել են որպէս ազգ գոյութիւն ունենալուց ու ճաւել են Փրանսիական ազգութեան ճոցը, որպէս նրա ճէկ տարրը, որովհետև նրանք ազգային կենսունակութիւն չունենալով՝ ճուրեցան:

Այստեղ, պարզ է, այն՝ որ "օսմանեան ազգութեան" գաղափարը յառաջ քշել ուղղները պարզ ճուրմի քաղաքականութիւն աչքի առաջ ունին, երբ Փրանսիական պետութեան, Փրանսիական ազգութեան եզերը իրենց օրինակ են աւնում:

Նոյնը կարելի է ասել ճիւս պետութիւններից և ազգութիւններից առած համեմատութիւնների վերաբերմամբ:

Բայց դեռ թողնենք այն վճռական պարագան թէ արդեօր թիւրքիացի ճէջ ապրող Հայերը, յոյները այսօր ամենափոքր

չափով անգամ կարելի է նճանեցնել նախկին Բասբերին և Բրլտոններին: Թողնենք որ թրքական, ասենք և օսմանեան, կուլտուրան ո՞չ ճիայն ոչ ճի կերպով չի կարելի համեմատել Փրանսիականի հետ, այլ թուրքը որպէս ազգ՝ աւելի ցած ճակարակ ունի, քան ճուլել ուղղ բաղկացուցիչ ազգութիւնները, — նկատենք ճիայն այն, որ այդ ճգտուճը գալիս է ճեր թէզը հաստատելու, այն՝ որ "օսմանցիութեան", "օսմանեան ազգութեան" գաղափարը պարզապէս ճուրմի նպատակով է ճէջտեղ դրուած: — Դա ճի ք ա դ ա ք ա կ ա ն օ լ թ ի լ ն է, ոչ-իրական, այլ տ ե ս ա կ ա ն:

Աճէն պետութիւն ունի իր տեսական քաղաքականութիւնը իր ա կ ա ն ի հետ ճիասին. առաջինը երկրորդի աչքը, դեկավարիչն է: Բայց ճեր ասման էլ Հէնց այն է, որ այդ քաղաքականութիւնը դատապարտուած է խորտակուելու, որովհետև այդ տեսականը ո՞չ ճիայն չի բոլորւճ կեանքի իրականութիւնից, այլ նրա բոլորովին հակառակ ուղղութեան արտայայտիչն է:

— Ի՞նչ էս:

— Լեհացի, կը պատասխանէ Պօդանի նահանգի ճէջ ապրող լեհը: Նա ո՞չ ճիայն ինքը չի ասիլ, որ գերճանացի է, գերճան ազգութեան է պատկանում, այլ գերճանացին ինքը նրան ճագումի այդպիսի հանդամանք չի տալ: Բայց նա կընդունի որ ինքը գերճանական հպատակ կամ գերճանական քաղաքացի է:

— Ի՞նչ ազգութեան կը պատկանես:

— Ուելշ, սկոտիական՝ — կասեն բոլոր ուելշները և սկոտացիները: Նրանք իրենց իրաւունք չեն տալ անգղիական ազգութեան անդամը համարուելու և ո՞չ էլ անգղիացին նրանց այդպիսի ստորոգելի կը ճանաչի: — Նրանք կը յարեն որ իրենք ա ն գ ղ ի ա կ ա ն ք ա դ ա ք ա ց ի ն ե ր են. ինչոր բոլորովին տարբեր հասկացողութիւն է:

Քաղաքացիութեան, հպատակութեան հանգամանքը չի կարելի շփոթել ազգութեան հետ, ինչոր ներկայ պայմաններում ուզում են անել "օսմանեան ազգութեան" գաղափարաբանները:

Այն բոլոր պետութիւնները, որոնք ճի քանի ազգութիւններ ունեն իրենց ճէջ (ուսական, գերճանական, անգղիական), երբէք չի կարելի պետութիւն-ազգութիւն անունը բաղկացուցիչ բոլոր ազգութիւններին տալ անխորտ Այդպիսի հասկացողութիւն և ո՞չ ճի սեղ կայ՝ ճեր օրերում:

Թիւրքիան իր կազմով, ազգութիւնների տեսակետով, աւելի ճոտենում է Աւստրո-Հունգարիային Արդ, կայ աւստրիական պետութիւն, բայց չկայ աւստրիական ազգութիւն, ճիայն հրէաներն են, որ հպաճանքից ապտտ մնալու համար կասեն, որ աւստրիական ազգութեան կը պատկանեն: Այլ է հունգարական (ճաճառ) պետութիւն, ա՞յլ՝ հունգարական ազգ: Դալիցիայի լեհը ո՞չ աւստրիացի է, ո՞չ էլ հունգարացի: Նոյնը պիտի հասկանալ և՛ խրուստների, չեխերի, սլովակների, սերբերի համար:

Փրանսիացին բրլտոնի, բասքի ճեռքից ուրոյն ազգութեան գոյութիւնը կարողացաւ լսիլ՝ իր քաղաքակրթութեան, ճշակոյթի ճիւրհիւ, և այլ՝ երկար դարերի ճանքերի արդիւնքով ու նրանց վերաճեց աշխարհագրական, ցեղազրական արտայայտութեան: Նոյնը արաւ իսլանացին ճաւերի նկատմամբ: Սակայն հունգարացին, գերճանացին, անգղիացին, ուսուր —

ինչքան էլ որ ոմանց կողմից երբեմն թեթև քայլեր էլ կատարւեցան—անկարող եղան իրենց տիրապետութեան սահմանները ճշգրտաբար պահպանելու և անկարող եղան իրենց տիրապետութեան սահմանները ճշգրտաբար պահպանելու և անկարող եղան իրենց տիրապետութեան սահմանները ճշգրտաբար պահպանելու:

Ու բարկացուցիչ պետութիւնների ճեջ՝ պետութիւնն ազգութեան կողքին, նրա տիրապետութեան տակ շարունակեցին դոյութիւն ունենալ ազգութիւն քաղաքացիները:

Նորագոյն ճիշգրտաբար Հասարակական Իրաւունքը (droit international public) և Ժողովրդական Իրաւունքը (droit des gens) պատճառով այդ իրողութիւնը եկել նուիրագործել են ու ճանաչել որպէս անձեռնմխելի իրաւունք, որի դէմ ճեղանչելը նոյնքան յանցանք, ոճիր է, որքան և անհատական իրաւունքի (droit prive):

— Ի՞նչ է սա, որ ազգութեան կը պատկանի:

— Թուրք, կարող է ասել, և ասում է, պոլսեցի, կարնեցի, վանեցի, սեբաստացի թուրքը: — Թուրք որ ցեղին, քանի որ այդպիսի ճի քանիսը կան (սելջուկ, թաթար . . .)

— Օսմանցի, առ առաւելն կարող է յարել օսմանցի թուրքը, լոկ պարզաբանութեան տեսակէտով, և դա իրականութեան հանդէպ սխալ չի լինիլ, ու այդպէս էլ է:

— Ո՞ր ազգութեան կը պատկանի:

— Օսմանեան. կարող է այդպէս ասել հայը, յոյնը, արաբը, Եւ եթէ ասի էլ, դա իրականութեան, դարեւոր ճանչցում ճի իրաւունքի հակառակ չի լինիլ, որքան էլ որ նա բռնադատուած լինի՝ այդպիսի ճի յայտարարութիւն անելու Որովհետեւ հայ, յոյն, արաբ, արդէն կազմակերպուած ազգութեան անուններ են և ճեկը ճիշտամանակ չի կարող երկու տարբեր ազգութեան պատկանիլ:

— Ո՞ր պետութեան հպատակ է:

— Թուրք, օսմանցի, օսմանեան, ամենայն իրաւամբ կարող է ասել հայն էլ, յոյն էլ, արաբն էլ . . . Եթէ ինչորի վրայ նայուած է հպատակութեան տեսակէտով:

Իսկ եթէ քաղաքացիութեան սկզբունքը ընդունուած է և պաշտպանուած է, այն ժամանակ օսմանեան պետութեան ճեջ երող հայը, յոյնը . . . բոլորն էլ իրենց սեպհական ազգութեան եզրը պահելով հանդերձ, ամենայն իրաւունքով կարող են ասել որ իրենք օսմանեան քաղաքացիներ են:

Ահա իրականութիւնը որ գոյութիւն ունի այսօրուան Թիւրքիայի ճեջ: Եւ ամէն ինչ այդ հիմունքներից պիտի բխէ:

Մի պետութիւն՝ այնքան զօրեղ, հաստատուն հիմունքներ ունի և ներքին խռովութիւններից զերծ է, որքան որ նրա ճեջ ճի կրօն է տիրապետում: Պէտք է ջանալ որ բոլոր հպատակները ճի եւ նոյն կրօնը ունենան, — այդպէս էին խորհում ժամանակին պետութեանց ամբապնդումի հին պաշտպանները: Ու տիրող աների, թագաւորող հարբատութիւնների, ղեկավարիչ շրջանների նշանաբանն էր ճի աւակրօնութիւն: Ներքին այդ քաղաքականութիւնն էր, որ դարերի ընթացքում գործեց և իր ախոյեանների աչքի առաջ իր կատարեալ սնանկութիւնն էլ յայտարարեց: Երկար ժամանակ չքաշեց համոզուելու, որ ճի պետութեան ճեջ շատ լաւ կարող են կողք կողքի ապրել ճի քանի կրօններ, առանց պետական հիմունքներին ու է վնաս

պատճառելու: Ու կրօնական հարաձայնի քաղաքականութիւնը թողնուեց: Նա այսօր դարձել է ժամանակավրէպ և անցեալի տխուր յիշատակ: Քաղաքակրթութիւնը կրօնական քաղաքականութեան էջը փակել է նորագոյն բոլոր պետութիւնների ճեջ: Այնուհետ, ուր նա դեռ քաշկըրուում է, արդէն ճահաճերձ վիճակ ունի: Խնդիրը վերջացած կարելի է համարել:

Պետութիւն և ազգութիւն հոմանիշ են: Մի պետութեան ճեջ ճիայն ճի ազգութիւն: Որքան որ պետութիւն և ազգութիւն նոյնութիւն կազմեն, — դա այնքան էլ ասելի ճեծ երաշխիք է նրա ամբապնդումին և յարատուութեանը: — Այդ սխալ հասկացողութիւնն էլ իր ժամանակի գործօնը հանդիսացաւ: Եւ երկար տառապանքներից յետոյ, քաղաքակրթութիւնը, կեանքը եկաւ ջախջախիչ կերպով ցոյց տալու այդ թէպէ հիմնովին սխալ լինելը: Նորագոյն պետութիւններից յառաջողեցիների ճեջ բարկացուցիչ ազգերի հարաձայնքը տեղ տեղ բոլորովին վերացուած է, տեղ տեղ էլ վերանալու վրայ է: Բազմացել, բազմաբնու, բազմատարր ազգերից կազմուած ճի պետութիւն նոյնքան առաւելութիւններ, ինչպէս և պակասութիւններ, կարող է ունենալ, որքան որ ճիատարր զանգուածից, ճի ցեղից, ճի ազգութիւնից կազմուածը: Խնդրի այդ կողմն էլ պատճառական դառն դասերով լուսաբանուած, պարզաբանուած է:

Եւ հիմա, որ Թիւրքիան երեք հարիւր տարուց ասելի Եւրոպայի շէճքին ապրկով ճինչե ցարդ անկարող եղաւ ազգերը ճուլեկ Եւրոպական անաւան անաւան անաւան անաւան պետութիւն դառնալ, երբ Եւրոպայից քըշուած՝ իր յանցանքների պատճառով, ապաստանելու տեղ ճիայն Ասիան ունի. երբ գտնուած է իր տկարացումի, թուլութեան, սպառճան, անկճան ի՛սկ, վերջին շրջանին ճեջ, — նա վերանորոգուելու, վերաստեղծուելու ա՛յլ պայճանների ճախին պիտի ճառճէր, քան բարկացուցիչ ազգերի ճուլումի:

Նորագոյն Եւրոպայից "Նոր Թիւրքիան" ուրիշ բան ունէր փոխ առնելիք, քան Հին Եւրոպայի թողած, ճաշուած՝ ապրանքը, — այն է՝ պետական ոյճով, հրաճանապարհով ազգերի ճուլումին ճգտող՝ փուճ, անպատու, քնասակար, քայքայիչ, պետութիւններ կորճանող ներքին քաղաքականութիւնը, ինչպիսին է օսմանցի պետութիւնը:

Աճէն ազգ հաւասարապէս զարգանալու, յառաջողիճելու անճեռնմխելի իրաւունքը պիտի ունենայ, — ահա՛ սկզբունքը, որի վրայ պիտի կառուցուէր Նորագոյն Թիւրքիայի շէճքը:

Նրա գոյութեան, յարատուութեան, զարգացումի, ամբապնդումի, ներքին խաղաղութեան փափազողները ա՛յդ, ճիայն այդ ուղղութեամբ պիտի գորճեն, ինչոր վերաբերում է՝ բարկացուցիչ ազգերի՝ ազգային ինտիլիցների վճուուելու գորճին: Փրկութեան ուղիներից ճէկն էլ այդ է:

Ս. ՍԱՊԱՆՅ-ՊԻԻԼԵԱՆ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՐ ԵՒ ՏՈՒՆՆԵՐԻ

ՍՕՅԻՆԻՍՏՆԵՐԻ ՀԵՐԹՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ¹⁾

Վերջին ժամանակները Հայկական Հարցի մասին գործնական սկսեցին գրել ու խօսել: *)

Այդ կարծիքները Հանդիսանալով իբրև արտայայտություն այս կամ այն Հասարակական դասակարգի կամ խմբակցութեան հոգեբանութեանը, քիչ թէ շատ տարբերում են մեկը մյուսից:

Սակայն նրանց մեջ կարելի է գտնել և ընդհանուր գծեր, որոնցից ամենակարևոր տեղն է բռնում այն հանգամանքը, որ այդ հասանքներից ոչ մեկը չի վերլուծում ժամանակակից իրականությունը ճաշկաստանում: Այդ դեռ չի նշանակում, ի հարկէ, որ այդ խմբակցութիւնները բոլորովին չեն դատում այդ իրականութեան մասին: Դրանցից խրաքանչիւրը պարզ և որոշ կերպով պատկերացնում է ժամանակակից ճաշկաստանը: Այլ հարց է, թէ համապատասխանում են արդեօք այդ հայեացքները և պատկերները իսկական իրականութեան թէ ոչ:

Մենք, սոցիալ-դեմոկրատներս, ոչ այնքան տեսական պահանջներից զրոյան, որքան դառն փորձերը աչքի առաջ ունենալով՝ քաջ գիտակցում ենք, որ միմիայն իրականութեան առարկայօրէն ուսումնասիրութիւնը և վերլուծումը՝ տալիս է մեր ձեռքը հզօր և յաղթական զէնք: Ընդհանուր էր ասում ուսու քննադատ Բելինսկին թէ՛ իրականութիւնը մի վիշապ է՝ երկաթէ ասամներով ու ճնօտներով և ով չի հնազանդում նրան, փշրում, ոչնչանում է:

Ճշգրտէն գիտակցելով իրականութիւնը, մենք կարողանում ենք գտնել և՛ այն ուղիները, որոնց միջոցով կիրառուրեն մեր իրէպաները: Չէ՞ որ իրականութեան վերլուծում ասելով մենք հասկանում ենք մի այնպիսի ուսումնասիրութիւն, որը ոչ թէ միայն պատկերացնում է իրականութիւնը, այլ և որոշում ու գիտակցում այն հասարակական ոյժերը, որոնք անողք կերպով մղում են հասարակութիւնը դէպի առաջադիմութիւն:

Գոյութիւն ունեցող հայեացքները ճանաչելի անելով՝ ժամանակակից ճաշկաստանի ներքին և արտաքին դրութեան վրայ, շատ քիչ բացառութեամբ, կրկնում են այն բոլորը՝ ինչ որ ասել և գրել է 80-ական և 90-ական թւականներին: Ել ի՞նչ զարմանք, որ այդ խմբակցութիւնները շարունակում են պահպանել և այն բոլոր մարտական միջոցները, որոնք գործադրում էին տասնեակ տարիներ սրանից առաջ:

Եւ իսկապէս, այդ խմբակցութիւնները, ինչպէս յայտնի է, մի ձեռքով քայքայում էին ճաշկաստանի աւատական-բռնակալական Հիմքերը, իսկ միւս ձեռքը մեկնում էին Եւ-

1 Ընդունելով խմբագրութեան առաջադրութիւնը աշխատակցի «Հնչակ»-ին, ես, իբրև Ռուսաստանի սոցիալ-դեմոկր. կուսակցութեան անդամ, քննակամարար, պատասխանատու եմ հմ յօդուածներին, որ եւ ստորագրում եմ լիատառ ազգանունովս: Ա. Զ.

* Ս. Գ. Հնչակեան Գուսակցութեան բռնած դիրքը եւ ընդգրկած սկզբունքները արդէն շատ պարզ եւ որոշ լինելով՝ ընդհանրապէս ճաշկաստանի և մասնաւորապէս հայկական խնդրի առթիւ, — ուրախութեամբ հրատարակում ենք Փետական Բ. Դումայի անդամ ընկ. Արշակ Չոհրաբեանի սոյն շահեկան յօդուածը, որ կատարած շուրջ թէ սեծ ցետարբորութեամբ պիտի կարգան «Հնչակ»ի ընթերցողները:

րոպային, յոյսեր տածելով, որ Եւրոպան օգնութեան կը հասնի հայերին և կը լուծէ հայկական դատը:

Աւելի ևս: Այդ խմբակցութիւնները՝ յեղափոխական գործունէութիւնը դարձրել էին միջոց՝ գրաւելու Եւրոպայի ուշադրութիւնը, հայերի ոգորմելի և անելանելի դրութեան վրայ. մի խօսքով՝ յեղափոխական գործը միջոց է, իսկ նպատակը՝ յանձնել դատը Եւրոպայի մեծ պետութիւններին: Եւ մինչդեռ խրաքանչիւր յեղափոխութիւն հաւասար է հասարակական բոլոր յառաջադէմ դասակարգի և սպասարկութեանը ընդդէմ տիրող դասակարգի և նրա կենցաղավարի բոլոր կողմերին՝ յեղափոխական գործունէութիւնը ամառահայ միջավայրում ձգտում էր մեծ պետութիւնների ձեռքերով ստանալ ինքնավարութիւն, թողնելով ճաշկաստանը իբրև պետութիւն խարխափել սոցիալ-քաղաքական հին, բարբարոսական ձևերի մէջ:

Անցան երկար ու ձիգ տարիներ: Արդիւ-Համլիլի րէփիմը դիպում էր կոտորածը կոտորածի վրայ, անտես թողնելով թէ՛ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը և թէ՛ նոյնանման դիմումները և նախագծերը: Իսկ Եւրոպան, — պաշտօնական հզօր Եւրոպան՝ նա ոչ մի րէպ միջոցի չը ձեռնարկեց, նրա կառավարութիւնները և տիրող դասակարգերը, դիւանագիտական խարդախութիւններ և ինտրիգաներ էին լարում, մի նպատակ ունենալով՝ պոտոր ջրի մէջ ձուկ որսար:

Եւ մինչդեռ Եւրոպան յափշտակած էր իր այդ դիւանագիտական խարդերով և տխրահռչակ statu-quo-ի պաշտպանութեամբ, — մեծ Ռուսաստանը՝ ուժգին կերպով ցնցեց ներքին յեղափոխութեամբ: Դա մի ուժեղ հարած էր ինքնավասակ և գոռոզ Եւրոպական բուրժուազիայի համար: Նա զգաց սարսուռ, երբ տեսաւ, թէ ինչպէս անտագոնիստ դասակարգը պրօլետարիատը, գուրի կանգնելով հասարակութեանը և օգտուելով բուրժուազիայից ստացած յեղափոխական դասերից, կատարում է բուրժուազական յեղափոխութիւն:

Եւրոպական բուրժուազիայի համար հիասթափութիւնը հետեց հիասթափութեան:

Ռուսաստանի յեղափոխութիւնը ցնցում է ամբողջ Արեւելքը և ճաշկաստանի statu-quo-ին տալիս է ահադին ճեղքեր: Նախ Բուլղարիան է անջատում, յետոյ Բոսնիան և Հերցեգովինան անջնում են Աւստրիայի ձեռքը և վերջապէս, Իտալիան օգտուելով այն հանգամանքից, որ երեք մեծ պետութիւնները զբաղւած են Մարսիօյի հարցով, յարձակւում է ճաշկաստանի վրայ և գրաւում Տրիպոլիսը: Եւրոպան լուրջութեամբ վաւերացնում է այդ ապօրինի քայլը և այրվալով տալիս է իր արտաքին քաղաքականութեանը testimonium paupertatis (չբաւորութեան վկայական):

Եւրոպայի դիւանագիտութիւնը սնանկացաւ, սակայն սընանկացան և այն յոյսերը, որ վրած էին նոյն Եւրոպայի վրայ, — յոյսերը, որով Եւրոպան փրկելու էր հայերին և տալու էր ինքնավարութիւն: Ներկայումս կարծես թէ նորից վերածնում են կուրի նախկին ձևերը: Բալկանեան պատերազմը, ճաշկաստանի ներքին պառակտումները սկսում են արթնացնել հին, արդէն թառամած յոյսերը: Դարձեալ մենք ականատես ենք, թէ ինչպէս հանդէս են գալիս պարբերական հրատարակութիւններ, որոնք նպատակ են դնում հետաքրքրել Եւրոպական «Հասարակական միաքը» հայկական դատով և այլն: Եւ մինչդեռ 90-ական թւականներին հանդիսանում

էին, իբրև հետևանք յեղափոխական գործունէութեան, ներկայումս ասպարէզից հեռացած է յեղափոխական գործը և լոկ դիմումներ են, որ տեղի ունենա: Երկրումը գոյութիւն չունի ոչ ձի հասարակական շարժում, հայկական դատով շատ քիչ է զբաղում ինտելիգենցիան ծինչև անգամ այնպիսի կեդրոնում, ինչպէս Պօլիսը:

Հայկական դատի լուծման համար գործադրւած Հին միջոցները պէտք է համարել ճեւած: Եւ այդ անյաջողութեան հիմնական պատճառներից մէկն էր՝ իրականութեան վերլուծման բացակայութիւնը:

Վերը մենք յիշեցինք, որ գործող խմբակցութիւններից իրաքանչիւրը պատկերացնում էր ճաշկատանի իրականութիւնը: Սակայն այդ պատկերները, ինչպէս կեանքը պարզեց և ապացուցեց, վերացական մտքի արտադրութիւն էին և այդ պարագայի շնորհիւ ոչ ձի գիտական արժէք չի ներկայացնում:

Եւ իրաւի Գործող խմբակցութիւնների գործելակերպի հիմնաքարն էր կազմում այն գաղափարը, թէ ճաշկատանը անընդունակ է իւրացնել եւրոպական քաղաքակրթութիւն, որ նա չունի ոչ ձի ապագայ: Ետտեղը գնում էին աւելի հեռու և պնդում էին, թէ իսլամը միանգամայն ժխտում է եւրոպական քաղաքակրթութիւնը և թէ կամ ճաշկատանը իսլամից հրաժարւի և ընդունի եւրոպական քաղաքակրթութիւնը, կամ թէ հրաժարւի վերջինից 1): Այս վերացական բանաձևին թե թեւ աւանդ մի այլ գաղափար է արձարւում, այն է, թէ հայ ազգը այն տարրն է, որը ընդունակ է իւրացնել այդ քաղաքակրթութիւնը:

Եւրոպան, — լսում էինք յաճախ — բնականաբար պէտք է օգնութեան գայ հայերին, որովհետև չէ որ քաղաքակրթութիւնը թանգ է նրա սրտին և բացի զրանից, նա շահագրգռւած է այդ դատում:

Այսպէս, ուրեմն, հայ ազգը ընդունակ է իւրացնել եւրոպական քաղաքակրթութիւնը, իսկ ճահճեղականները՝ ոչ: Այս բանաձևը պատմաբանօրէն միանգամայն անկարելի է ապացուցել, որովհետև ի դ է ա լ ի ս ա ա կ ա ն է: Այսպիսի գաղափար կարող էր գոյութիւն ունենալ XVIII-րդ դարու վերջերին, երբ ֆրանսիական լուսատրիչները քարոզում էին «ճարհկային բնութեան» վարդապետութիւնը: Ներկայումս նոյն իսկ իդէալիստների բանակում անկարելի է գտնել այդ թէօրիայի հետևողներին, որովհետև գիտութիւնը արդէն ապացուցել է, որ ճարհկային բնութիւնը նոյնպէս փոփոխական է, ինչպէս և բնութեան բոլոր կողմերը:

Սակայն թողնելով տեսական կողմը, մենք պիտի մտանանիշ անենք, որ կեանքումը, իրականութեան մէջ, այդ գաղափարը պարզեց իր ներքին չքաւորութիւնը:

Եւ իսկապէս, Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը պարզեց, որ իսլամական տարրերը դիւրին կերպով իւրացնում են եւրոպական քաղաքակրթութեան սկզբունքները: Վօլգայի թաթարները, Թուրքեստանի սարթերը, թիւրքմէնները, դիրգիզները որոշ դեր կատարեցին այդ յեղափոխութեան մէջ: Այդ ճահճեղականները բոլոր չարս Դուսմաները ուղարկեցին առաջադէմ պատգամաւորներ և ուժգին կերպով կուռել են ազատութեան գրօշի տակ: Կովկասեան թաթարների մասին միայն կարելի է ասել, թէ նրանք բէգերի և կառավարութեան աժէնանների կողմից գրգռւած հայկական կոտորածներ կատարեցին: Սա-

կայն այդ թաթարները շատ շուտով գիտակցեցին այդ սխալը: Ներկայումս թաթարները այնպիսի կեդրոններումը ինչպէս Թիֆլիզը, Դուսայի ընտրութիւններին քէները տալիս են սօցիալդէմօկրատիային: Իսկ Պարսկաստանի յեղափոխութիւնը, ճահճեղաստանի դէպքերը 1908 թ. վերջնականապէս ապացուցին, որ ներկայումս տիեզերքում գոյութիւն չունեն տարրեր, որոնք անընդունակ լինէին իւրացնել եւրոպական քաղաքակրթութիւնը: Իսկ Չինաստանի արթնանալը պարզեց, որ քաղաքակրթութեան հզօր ալիքների հարւածներից ոչ թէ միայն ճահճեղականութիւնն է նւաճւում, այլև չինական պատերն են խորտակւում:

Եւրոպակա՞ն քաղաքակրթութիւն: Այս վտեմ խօսքերի տակը ճածկւած է մի պրօզայի բովանդակութիւն: Գաղտնիք չէ, որ ժամանակակից քաղաքակրթութեան սօցիալանտեսական հիմքն են կազմում արդիւնաբերական կապիտալիզմը և բուրժուական հասարակական յարաբերութիւնները: Գաղտնիք չէ և այն ճշմարտութիւնը, որ այդ կապիտալիզմը և բուրժուական յարաբերութիւնները արդէն մօտ են իրենց վարդացման վախճանին, որ բուրժուական, երբեմն յեղափոխական, ներկայումս լարում է իր բոլոր անտեսական և բարոյական սյօթերը՝ սօցիալիզմի կարմիր ուրականից ազատելու նպատակով: Եւ այդ գործում, նա ոչ ձի խորութիւն միջոցների մէջ չի ճանաչում:

Եւրոպական կապիտալիզմի ներքին հակասութիւնը հասել է զարգացման այն աստիճանի, որ բուրժուական աշխատում է առանց մի բողէ կորցնելու, շուտափոյթ գտնել, ինչ գնով էլ լինի, նոր շուկաներ, որպէսզի ազատի եւրոպական ներքին շուկաները սարանքների ահագին կուտակումներից: Նա շատ լաւ է գիտակցում, որ իւրաքանչիւր բողէ թանգ է, որ անհրաժեշտ է շտապել, սպա թէ ոչ պրօլետարիատի հզօր բուռնցքը պատրաստ է վերջին հարւածով ջախջախել, փշրել նրա տիրապետութիւնը ամբողջ տիեզերքում:

Արտաքին շուկաների անդադար որոնումների պրօցեսում, որը բնորշում է եւրոպական պետութիւնների ներկայ արտաքին քաղաքականութիւնը, — բուժուադիւն չունի ոչ ցանկութիւն և ոչ ժամանակ պատճառական անկեղծ զգայմունքներ տածել դէպի մի տառապող ազգ, օգնել և նրան բարեփոխել նրա դժբախտ վիճակը: Նրա ժամանակը կլանւած է ասակարգային կուռով՝ հզօր և յողթական պրօլետարիատի հետ և արտաքին շուկաների անդադար որոնումներով: յարձակողականի պատաւոր դերից՝ նա անցել է պաշտպանողականի խղճուկ և ուրբմելի դերքերի վրայ, իսկ նրա կրճքումը վաղուց է, ինչ որ ցամաքել է զգացմունքների որ և է աղբիւր:

Արտաքին շուկաների այդ անդադար որոնումների պրօցեսում, բուրժուական բնականաբար ձգտում է սպահալի իր հին արդէն գրաւած շուկաները:

Սակայն շահագործելով շուկաները, եւրոպական կապիտալիզմը ընդլայնացնում և խորացնում է տեղային հասարակութեան պահանջները և ստեղծում է նրա մէջ ձգտումներ՝ միւսնոյն միջոցներով և ձևերով նոյնանման սարանքներ արտադրել: Այդ ձգտումները քանի գնում, այնքան զարգանում և ուժեղանում են: Սրա հետ թե թեւ աւանդ գոչանում և կեդրոնանում են տեղային կապիտալները և հասարակութեան խորքերում մնում ու դատարարակում է սեպհական բուրժուազիա: Այդ մօմենտից սկսած ասպարէզ է գալիս ազգայ-

1 Օր. Ծ. Թոփչեանի «Իսլամ և Ռէֆօրմներ»:

նական շարժում, որը նպատակ է դնում ազատել օտարազգի լծից:

Այդ պատճառով ճոճեմուտից սկսած եւրոպական կապիտալիզմի շահագործումը կաշկանդում է տեղային հասարակութեան զարգացումը, իսկ եւրոպական բուրժուազիան արգելք է հանդիսանում հասարակութեանը անցնել որոշ սահմաններից, որովհետեւ տեղային կապիտալիզմի զարգացումը անողորմ կերպով տանում է դէպի էմանցիպացիա և ոչնչացնում է եւրոպական կապիտալի տիրապետութիւնը այդ ճիշտագործում:

Իր այդ արգելքներում, եւրոպական բուրժուազիան գործադրում է այնպիսի բարբարոսական մեթոտներ, որոնց հետ յաջող կերպով կը ճրջէին ճիշտագործեան ֆէօդալների բռնապետական ճիշտները: Բաւական է այստեղ յիշել թէ ինչ զղելի և վայրենի ճիշտներ է գործադրում "ազատասէր" Անգլիան հնգկաստանում:

Տաճկաստանը վաղուց է որ դարձել է եւրոպայի հաճար ճի ընդարձակ և խիստ կարևոր շուկայ: Տաճկաստանի աշխարհագրական դրութիւնը բացառիկ է և այս հանգամանքը աւելի ևս կարևոր է դարձնում այդ շուկայի նշանակութիւնը: Սա ճի ճշմարտութիւն է, որ յայտնի է իւրաքանչիւրին:

Այնուամենայնիւ այդ ճիտքը լուսաբանելու համար՝ բերենք ճի քանի կարևոր թւեր:

Տաճկաստանումը գոյութիւն ունեցող եւրոպական դրամագրութիւնների թիւը ահագին է: Պաշտօնական աղբիւրները այսպէս են ձուարարապէս դասաւորում այդ դրամագրութիւնները: Ֆրանսիական դրամագրութիւնը հաւասար է 100,000,000 ստերլինգ, գերմանական դրամագրութիւնը՝ 36,000,000 ստերլինգ և անգլիականը՝ 30,000,000 ստերլինգ: Արտասահմանումը գոյութիւն ունեցող ֆրանսիական դրամագրութիւն 1/15 մասը գտնուում է Տաճկաստանումը: Այդ ճիւնոյն ֆրանսիական դրամագրութիւնը այսպէս դասաւորւած է Տաճկաստանումը: Մէկ և կէս միլիոն ֆրանկ տաճկական պետական արժեթղթերում, 400 միլ. ֆրանկ երկաթուղիների արժեթղթերում, երկաթուղիների, որոնք գլխաւորապէս գտնուում են ծովափի վրայ և 300 կիլոմետրից աւելի չեն հեռանում ծովափից, 100 միլիոն ֆրանկ անշարժ կալուածքներում, 80 միլիոն ֆրանկ բանկային գործում և մի միայն 60 միլիոն ֆրանկ քարածխային գործում: Այսպիսով այդ ահագին դրամագրութիւնը աճեցնւոյն ճասը, այն է 2, 4%-ը գործադրում է արդիւնաբերական նպատակներով: Ֆրանսիական դրամագրութիւնը կառուցանում է երկաթուղիի գծեր, որոնք անցնում են ծովափով, բանկեր, ապրանքների արտահանութեան և ներմուծման համար՝ զանազան գրասենեակներ և հիմնարկութիւններ, փոստային բիւրօներ և այլն. ճի խօսքով նա ձեռնարկում է անհրաժեշտ և բազմատեսակ ճիշտներ արտասահմանեան ապրանքներ Տաճկաստան ներմուծելու նպատակով: Խորտակելով տեղային ճանր արտադրութիւնը, նպաստելով ճանր արհեստի անկմանը, կազմալուծելով երբեմն ուժեղ տաճկական գիւղացիութիւնը, Տաճկաստանի այդ հիմնական սիւնը, արտասահմանեան դրամագրութիւնը խոյս է տալիս ստեղծել այստեղ արդիւնաբերական ճիշտագործ, կաշկանդում և արգելք է հանդիսանում հասարակական նորագոյն դասակարգի գոյութեանը: Նա թոյլ է տալիս ունենալ միայն սեպհական վաճառականներ, բայց ոչ արդիւնաբերողներ: Բացի այդ հան-

գամանքից, որ արտասահմանեան դրամագրութիւն ճեճագոյն մասը տեղաւորւած է առեւտրական, բայց ոչ արդիւնաբերական գործում, եւրոպական կապիտալիզմը կարողացաւ ստիպել Տաճկաստանը ընդունել մաքսը որոշ չափով, այն է 11%: Այս հանգամանքը խիստ խոշոր արգելք է հանդիսանում տեղային արդիւնաբերութեան զարգացման գործում:

Քրիստոնեայ ազգութիւնները՝ հայերը, յոյները, և այլն, բնականաբար շատ շուտ իւրացրին արտադրութեան և գլխաւորապէս սպառման կապիտալիստական ձևերը: Ստում ենք, բնականաբար, որովհետեւ, հայերը, օրինակ, նախ ազատ էին որ և է աւատական նախապաշարութիւններից, բացի՝ դրանից հայերը, իբրև նաճւած տարր, տաւապելով տաճկական լծի տակ՝ օրգանապէս զգանք էին տածում դէպի տաճկական բարբարոսականաւատական "քաղաքակրթութեան" ձևերը և վերջապէս հայերը կապւած էին եւրոպայի հետ ընդհանուր հոգևոր կապերով, ինչպէս օրինակ՝ կրօնը:

Եւ որչափ աւելի էր զարգանում հայերի ճէջ եւրոպական նիստ ու կացի պահանջները, այնչափ արագ էր աճում ու զարգանում իր սեպհական, հայկական բուրժուազիան, այնչափ այն ճէղքը, որ տեղի ունէր նրա և տաճկական տարրի ճէջ հէնց նաճուածի առաջին օրից, աւելի ու աւելի լայնանում և խորանում էր: Այս պարագաների ճէջ պէտք է որոնել երբեմն ճածուկ, երբեմն աղճկալի ընդհարումների՝ պարզաբանութիւնը, ընդհարումներ, որոնք տեղի են ունեցել հայկական և տաճկական տարրերի ճէջ:

Տաճկական տարրը աւելի դանդաղ էր առաջադիճում: Եւ հասկանալի է թէ ինչու: Տաճկաստանը սկզբից եղել է զինուորական բանակ: Ձգտելով նոր և նոր նաճումներ կատարել, տաճկական տարրը ստեղծեց ինքնուրոյն "քաղաքակրթութիւն", որի գլխաւոր մասը՝ շահագործման բարբարոսական ձևերը ոչ թէ միայն հակասում, այլ միանգամայն և կարուկ կերպով սպառնում էին ոչնչացնել, հողի հետ հաւասարել եւրոպական կապիտալիստական հասարակութիւնը:

Եւրոպական կապիտալիզմի արշաւանքը ստեղծեց կռիւ կապիտալիստական և բարբարոսականաւատական ձևերի ճէջ:

Սակայն Տաճկաստանում էլ, ինչպէս և աճեցութեան կապիտալիզմի ներքին հակասութիւնները շատ շուտ բացուեցին և սկսեցին աճել ու զարգանալ:

Տաճկաստանում սկսեցին զարգանալ նոյնպէս ճգտումներ ստեղծել սեպհական կապիտալիստական արդիւնաբերութիւն, ազատել եւրոպական կապիտալիզմի անսահման շահագործումից և իւրայնել եւրոպական ձևեր և ճեթօտներ:

Այս ուղղութեամբ առաջին խոշոր քայլը կատարեցին "Երիտասարդ Թիւրքեր"ը 1908 թ.:

Տաճկաստանի այդ յեղաշրջումը խոշոր քայլ էր մարդկութեան առաջադիճութեան ասպարէզի վրայ: Աճող լիեղերբի դէճօկրատիան ունէր կատարեալ իրաւունք յնճալ այդ առթիւ և ողջունել Տաճկաստանը: Չէ որ Արդիւնաճմիլի անկումը նշանակում էր "ինքնուրոյն տաճկական" քաղաքակրթութեան տապալումը. չէ որ սահմանադրութեան յայտարարութիւնը հաւասար էր պաշտօնական և բուրժուական եւրոպայի պարտութեանը: Դէճօկրատիան լաւ էր գիտակցում, որ այն օրից յետոյ Տաճկաստանը անցնում է դէպի այն շրջանը, որտեղ աւատական հին ձևերը խեղճած հն

լինելու և լայն, արձակ ու հարթ ճանապարհն է բացուած կապիտալիստական ձևերի համար, որտեղ ստեղծուած են անհրաժեշտ պայմաններ բուրժուական հասարակութեան զարգացման համար և վերջապէս որտեղ նորագոյն դասակարգային կռիւը կազմուած է այդ զարգացման պիտուր գործօնը:

Սակայն յեղաշրջուածը լիովին չը կատարեց: Այս երեւոյթի գլխաւոր պատճառը կայանում էր նրանում, որ յեղաշրջման ծոծկնուած հասարակական յարաբերութիւնները զարգացման համապատասխան աստիճանի չէին հասել: Եւ իսկապէս, պատմական այդ ճեճ ծոծկնախնայի բացի երկու հայկական կուսակցութիւններից, այլ կուսակցութիւններ կարելի է ասել որ գոյութիւն չունէին: Բանւոր դասակարգը նազ էր և կազմաւորուած, իսկ բուրժուազիան անկարող եղաւ սուպարէզ հանել ճի այլ կուսակցութիւն, որը արտայայտէր նրա դասակարգային շահերը: Դէժոկրատիան ներկայանում էր սրպէս ինտելիգենցիայի խմբակցութիւններ՝ ներկաւ սոցիալիստական գոյնով:

Եւ որովհետև հասարակական յարաբերութիւնները հասունացած չէին, յեղաշրջման օրերին միմիայն "երխտասարդ թիւրքերն" էին ներկայացնում ակտիւ ոյժ:

Տաճկաստանի սոցիալական կիսազարգացումը ամբողջովին արտայայտեց "երխտասարդ թիւրքերի" կուսակցութեան մէջ: Յանձին այդ կուսակցութեան, տաճկական հասարակութեան առաջագէճ խաւերը արտայայտեցին իրենց բաղձանքները, որոնց շարքում առաջնակարգ տեղն էր բռնում՝ Արդիւ-Համիդի բեժիմի տապալման ցանկութիւնը:

Եթէ Տաճկաստանը զարգանար անկախ և արձակ, այդ պարագայում հաւանական է, որ այդ յեղաշրջումը լինէր աւելի ուշ, մինչև որ հասարակական յարաբերութիւնների զարգացումը ձեղքէր միջնադարեան աւատական կեղևը:

Սակայն եւրոպական հասարակութիւնների ազդեցութիւնը, ինչպէս վերը ասեցինք, մեծագոյն էր, յեղաշրջումը, որ առաջ բերեց եւրոպական կապիտալիզմը՝ խոշոր էր, միջազգային դրութիւնը շատ բարդ և սուր:

Եւ ահա այդ պարագաների շնորհիւ, շնորհիւ Տաճկաստանի նազմանը, որը ճի կողմից եւրոպական շահագործումի հետեանքն էր, իսկ միւս կողմից աւատական բարբարոսական ձևերի տիրապետութեան արգասիքը, — տաճկական քաղաքական յեղաշրջման հարցը սուր բնոյթ է ստանում և պահանջում է շուտափոյթ լուծում:

Յեղաշրջումը պէտք է ցնցել և ցնցեց ամբողջ հասարակութիւնը Տաճկաստանում:

Սակայն անցան տարիներ, և "երխտասարդ թիւրքերի" կառավարութիւնը ներքին սոցիալական զարգացման համար կարելի է ասել ոչինչ չարեց: Բաւական չէր տապալել հին բեժիմը, անհրաժեշտ էր նաև ստեղծել հասարակական նորակոյն ոյժերի զարգացման համար՝ նորանոր պայմաններ: Ստեղծելով միլիտարիզմ եւրոպական սխտէճով, "երխտասարդ թիւրքեր"ը կարծես թէ չհասկացան, թէ ի՞նչ հրատապ հարցեր է շարտուած կեանքը պատմական անպարէզի վրայ:

Բայց կեանքը կանգ չի առնում: Պատմութեան անիւը թէև դանդաղ, բայց միշտ առաջ է սլանում և անկասկած հասարակական յարաբերութիւնների անողոք զարգացումը կատիպէր տիրապետող կուսակցութիւններին և դասակարգերին գործել այն ուղղութեամբ, որը որոշուած էր 1908 թ.

յեղաշրջումով. քաղաքացիական օրէնսդրութիւնը կղիջէր նորագոյն կեանքի պահանջներին, բայց առ քայլ կյարձարէր իրականութեանը և կմաքրէր այն արդէն հնացած կողմերից, որոնք համապատասխանելով աւատական ձևերին, կաշկանդում էին արտադրող ոյժերի զարգացումը: Հողային օրէնսդրութիւնը, — որը ունի առաջնակարգ նշանակութիւն այն պիտի "գիւղացիական" պետութեան համար, ինչպէս է Տաճկաստանը, — կձևափոխէր և հրաժարելով հին աւատական սխտէճից, կհարթէր ճանապարհը նոր կապիտալիստական ձևերի համար գիւղումը, կարճէր հողը արբանք, կստեղծէր կապիտալիստական սեպհականութիւն: 1) Այս պրոցեսում աւետարական կապիտալը կփոխարինէր արդիւնաբերական կապիտալով և Տաճկաստանի կապիտալիստական արդիւնաբերութիւնը արագ քայլերով առաջ կընթանար:

Սակայն եւրոպական բուրժուազիայի արձայնին աչքերը լաւ էին տեսնում թէ ինչ է խոստանում նրան Տաճկաստանի ծոռ ապագան: Նախ Իտալիան է յարձակում Տաճկաստանի վրայ, իսկ յետոյ դիւանագիտական խորագիտութիւնները և ինտրիգաները, օգուելով այն հանգամանքից, որ Տաճկաստանը նոր է սկսել քայլել կապիտալիստական ուղիով, առաջ են բերում բալկանեան ահաբեկ պատերազմը:

Պաշտօնական Եւրոպան, այդ խանութպանների և վաշխառուների ճննդալալը, այդ ծոծկնային հագնում է իր երեւին ազատասիրական դիմակը և սկսում դրդել զանազան փոքր ազգութիւններին ապստամբութեան դրօշ բարձրացնելը Տաճկաստանի դէմ անկախութիւն ձեռք բերելու նպատակով:

Աղւեսային քաղաքականութիւն: Մինչդեռ երկի, երբ Արդիւ-Համիդը իր շարժերով սարսափ էր տարածում ամբողջ պիեղբրքում, իսկ փոքր, նաճուած, կեղեքւած, արիւնաքամ եղած ազգութիւնները պարզում էին ձեռքերը և օգնութիւն խնդրում Եւրոպայից, իսկ այս վերջինը անուշադիր էր թողնում այդ բոլոր անցքերը: Ներկայումս, երբ Տաճկաստանը ձգտում է թօթափել իր ուտերից աւատական կենցաղը և ծանել կապիտալիստական երկրների շարքերը, — պառու և խարդախ Եւրոպան իր թառամած և ցամաքած սրտում իբր թէ գտնում է ազատասիրական զգացումներ:

Ներկայումս իւրոքանչիւրի համար լոյսի պէս սլարդ է, թէ ինչ շահեր էին հետապնդում թէ վիճակիցները և թէ սրանց մէջքերի յետեից թագնուած պաշտօնական Եւրոպան:

Պատերազմը ընդհատեց Տաճկաստանի առաջադիմութեան բարդ գործը, ընդհատեց, բայց չկործանեց: Աւելի ևս: Այս պատերազմը անխնայ կերպով բացեց այն բոլոր թերութիւնները, որոնք գոյութիւն ունէին Տաճկաստանի սոցիալ-քաղաքական կազմի մէջ. նա պարզեց և ընդգծեց այն խոշոր հակասութիւնները, որոնք թուլացնում և ուժասպառ են դարձնում Տաճկաստանը: Դա՛ հին աւատական սխտէճի և աճող նորագոյն արտադրող ոյժերի մէջ գոյութիւն ունեցող հակասութիւնն է:

Եւ պատերազմը, ինչպէս ամենուրեք, այնպէս և՛ Տաճկաստանում անհետեանք չի անցնի: Դէժոկրատական մաս-

1 Յայտնի է, որ Մահմուդ Էսադ էֆենդիի հողային օրինագիծը որոշում է հողային սեպհականութեան նոր իրաւաբանական ձևեր: Թէև այդ օրինագիծը ունի շատ թերութիւններ, այնուամենայնիւ դա սի խոշոր քայլ էր, որի հետեւանքը կընէր մասնաւոր և միջին հողային սեպհականութեան կենտրոնացման արագացումը եւ խոշոր կաւաճների զոյացումը: Ա. Ջ.

սաները իրենց ուսերի վրայ տարան այդ դժբախտ պատերազմը: Սրանց արհեստը, դիակներով և տնտեսական քայքայումով վճարեց Հին աւստական ճաճկատանը: Իր խոշոր աւերքը կապիտալիստական աշխարհին: Վերքերը շատ խորն են, ցաւը կսկծալի, դժբախտութիւնը անբուժելի: Այս բոլոր պարագաները ստիպողաբար կպահանջեն ժողովրդական ճաստաներից սեղծել շարքերը, որպէսզի Հասցնեն ներքին յեղաշրջումը իր արամաբանական վախճանին և ստեղծեն մի այնպիսի կաղձ, որը կհամարցնի ու կզարգացնի ճաճկատանի Հասարակութիւնը:

Եւ պաշտօնական խորհրդաւ Եւրոպան չէ, որ կպայ օգնելու այդ ժողովրդական ճաստաներին, ինչ ազգութեան էլ պատկանեն այդ ճաստաները: Ընդհակառակը՝ նա կարէ իր բոլոր ոյժերը, որ կրկին տապալէ և ոչնչացնէ նորագոյն կարգերը, խեղդի դէժօկրատիայի առաջադէմ ձգտումները:

Մօճեմտը խիստ կարեւոր է: Դէժօկրատիայի և նրա գլուխ սօցիալիստների առաջին խնդիրն է գիտակցել նախ՝ որ փոքր ազգութիւնների ազատութեան գործը՝ կախած է, ոչ թէ դիւանագիտական խորհրդի խաղերից, ո՛չ թէ Եւրոպական մեծ պետութիւններից, որոնց շահերը հակառակ են ճաճկատանի դէժօկրատիային, այլ ճաճկատանի վերածնութեան գործի հետ: Հետևապէս դէժօկրատիան պէտք է կազմակերպէ ժողովրդական ճաստաները առանց ազգութեան խարու թեան, պարզէ նրանց մօճեմտի նշանակութիւնը, լուսաբանի պարտութիւնների գլխաւոր ֆակտորները, զարթնեցնէ նրանց մէջ գիտակցութիւն, թէ ճաճկատանի և ուրեմն իրենց ազատութեան գործը իրենց ձեռքումն է, թէ արդէն անցել ու անդարձ գնացել են այն ժամանակները, երբ պետութեան մէջ մի ազգութիւն կարող է տիրապետել միւս ազգութիւնների վրայ և այդ պարագայի շնորհիւ օգտուել առանձնաշնորհումներով, թէ սեպհական ազատութեան և անկախութեան շահերը պահանջում են, որ բոլորը՝ առանց ազգի, սեռի և կրօնի խտրութեան լինեն՝ Հաւատար օրէնքի առաջ, կայն, կայն:

Դէժօկրատիան առանց ազգութեան խտրութեան պէտք է սեղծի իր շարքերը: Եւ Հայկական դէժօկրատիան, իբրև աւելի առաջադիմական դէժօկրատիա, պէտք է հանդիսանայ նախաձեռնողի դերումը՝ այդ դժար, բայց փեմ քաղաքական գործումը:

Եւ դէժօկրատիան խիստ ճաստաները, ինչպէս մի ճարդ պէտք է պահանջեն:

- 1) Արտակարգ ազգային ժողով, որ պէտք է գումարել առանց ազգի, կրօնի և սեռի խտրութեան՝ ընդհանուր, հաւատար, ուղիղ և գաղտնի քուէարկութեամբ:
 - 2) Ազգային ժողովը որոշում է հիմնական օրէնքները, որոնց մէջ առաջին տեղն են բռնում պետական կազմի, ազգային ինքնարշտման, տեղային լայն ինքնավարութեան, լեզուի, կրօնի, խօսքի և անհատի ազատութեան հարցերը, կայն:
 - 3) Ազգ. ժողովը պէտք է վերացնի այն բոլոր տնտեսական և իրաւաբանական սխտեմները, որոնք լինելով աւստական միացորդներ, կաշկանդում են արտադրող ոյժերի ազատ զարգացումը:
- Այս հիմնական պահանջները պէտք է խոշոր առերով լինի գրւած սօցիալիստների և դէժօկրատիայի դրօշակի վրայ: Այդ դրօշակը ծածանւելով ժողովրդական ճաստաների

վրայ, պէտք է առաջ ուղեւորի դէպի վերածնութիւն: Այս և մի միայն այս կուում վերջնականապէս կլուծւին և՛ սոսկական և՛ հայկական և՛ այլ ազգութիւնների դատերը:

Այս փեմ կուում Եւրոպական պրօլետարիատը կուայ իր անկեղծ աջակցութիւնը, որովհետև ժամանակակից հասարակութեան մէջ դա միակ դարակարգն է, որ շահագրգռւած է ճաճկատանի վերածնութեան մէջ:

ԱՐՇԱԿ ԶՈՂՐԱԲԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԾՈՒՐՁԸ

II

Նախ մի քանի խօսք այն մասին թէ՛ Եւրոպական դիւանագիտութիւնը տրամադիր չէ Ասիական Թիւրքիայի, ուրեմն և Հայկական խնդրով զբաղուելու:

Միջանկեալ կերպով ասենք, որ քաղաքական աշխարհում Ասիական Թիւրքիայի խնդիր գոյութիւն չունի, ինչպէս չէ ունեցած Եւրոպական Թիւրքիայի խնդիր, այլ եղած է և կայ Արևելեան Խնդիր ընդհանուր անուան տակ մի շարք խնդիրներ, որոնց մէջ է և՛ Հայկական խնդիրը: և որովհետև Արևելեան Խնդիր ընդհանուր անունը կրող՝ օսմանեան պետութեան քաղաքական այդ մեծ հանգոյցը բովանդակուած է իր մէջ ազգային-քաղաքական կիճիւնների մի շղթայ, որի օղակները ինչքան էլ իրարու հետ մի յայտնի աստիճան կապուած են և միևնոյն պատճառներից ու դրօշապատճառներից մտնող առած, այնուամենայնիւ շնորհիւ մի շարք այլ և այլ հանգամանքների, այդ հանգոյցի, այդ շղթայի իւրաքանչիւր կիճիւնը, օղակը ունի իր գարգացման առանձին պատճառները, ուրոյն բնաւորութիւնը, իր առանձնայատուկ կողմերը՝ որոնց պատճառաւ էլ ծագում է տուած ուրոյն ուրոյն միտումների և հէնց դրանց պատճառով էլ ամէն կիճիւն լուծուել է առանձին առանձին, տարբեր ժամանակներում ու տարբեր ձեւերով:—Հետևապէս ո՛չ հիմ և ո՛չ էլ փաստ կայ ենթադրելու թէ՛ Հայկական խնդիրը կարող է լուծուել ա՛յլ կերպ, այսինքն բովանդակ Ասիական Թիւրքիայի դեռ քաղաքականապէս գոյութիւն չառած խնդրի ամբողջական լուծումով: Ահա թէ ինչու անտեղի է Հայկական խնդիրը կապել ասիական Թիւրքիայի ամբողջութեան հետ և այս վերջինիս ճակատագրի մէջ տեսնել մեր դատի վախճանը:

Ճիշտ է, որ Վեննայի կօնգրէսից յետոյ մի քանի անգամ մեծ պետութիւնների կողմից գաղտնի կերպով դիւանագէտների կաբինետներում յուզուել է Թիւրքիան փայ-բաժին անելու միտքը և՛ յայտնի կերպով էլ՝ Թիւրքիան ամբողջովին բարեկարգելու գաղափարը: Բայց և այնպէս, պետութիւնների մէջ եղած հակամարտութեան և Թիւրքիայի յամառութեան շնորհիւ, այդ ձգտումները կեանքի մէջ մարմին չեն առել և իրերը զարգացել են իրենց բնական ընթացքով: Պատճառութեան ընթացքը և իրերի զարգացման արամաբանութիւնը Թիւրքիայում վիպում են, որ Հայկական խնդիրն էլ իր լուծումը պիտի ստանայ որպէս Հայկական խնդիր և ո՛չ թէ ասիական Թիւրքիայի ամբողջութիւնից անբաժանելի մի հարց: Ինքնատիքեան այժմ մի ճանրակշիւ հարց է ծագում

թէ՛ եթէ այդ այդպէս է, ապա Հայ յեղափոխութիւնը՝ որպէս սոցիալ քաղաքական մի արտայայտութիւն, մի արդիւնարար, ունի՛ նա գոյութեան իրաւունք. թէ՛ արդէն կորցրել է այդ. — պատասխանը դրական է:

Եթէ Հայ ժողովուրդը պատրաստակամութիւն ունենայ իր դատը ձեռք առնելու, շարժուելու, եւրոպական դիպլոմատիան էլ տրամադրութիւն կունենայ Հայկական ինկրով դատուելու և կլուծի: Հայ կազմակերպութեան ամբողջ առաքելութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ Հայ ժողովրդի քաղաքական դատաւարակիւնը, ազգային ինքնաձանաչողութեան, դատակարգային գիտակցութեան և ճաշակոյտական զորագոյնման ուսուցիչը լինել, յեղափոխական ոգի ներշնչել նրան, Հասկացնել նրա շահերը, ցոյց տալ նրան փրկութեան ուղին, ազատութեան ճանապարհը է այն կերպ կուէ կոփել զանգուածներին, որ նա այսպիսի պատմական բազմաբնի իմաստն ըմբռնելու կարողութիւն ունենայ և սեփական ոյժերով ընդունակ լինի վարել իր ազատագրութեան դատը մինչև լիակատար յաղթանակ: Եթէ ժողովուրդը հակառակ է ո և է շարժման, — մենք ենք մեղաւոր: Եթէ եւրոպական դիպլոմատիան տրամադիր չէ մեր ինկրով դատուելու, նոյնպէս մենք ենք մեղաւոր:

Եթէ Գործի յաջողութեան նկատառումներով կարիք զգացւի իմանալ Հայկական շրջանների տրամադրութիւնները՝ ապա ամենից առաջ և գլխաւորապէս պիտի ծանօթանալ բուն երկրի, Հայաստանի տրամադրութիւններին՝ քանի որ նա ինքն է հայկական ինկրի առարկան, գործը կատարուած է նրա անունով և գրա համար մեծ նշանակութիւն ունի նրա բռնկիլք դիրքը շարժման հանդէպ և գործի յաջողութիւնը մի զգալի չափով այդ դիրքից է կախուած: Նրա՛ Հայաստանի ազգային-քաղաքական ազատագրութեան գաղափարն էր Հայ յեղափոխութիւնը հանդէպ բերել պատմութեան թատերաբեմը և որ դա էր մեր կուսակցութիւնների երէկուայ նպատակը. — թէ այդ գաղափարին ճնշուող տուող դրդապատճառները, թէ այդ նպատակը առաջ մղող շարժառիթները դեռ գոյութիւն ունին և՛ այսօր էլ աւելի քան երբ և իցէ առաւել կարկառուն ու դրանք աւելի ազազակող հանգամանք ունեն, — այդ մասին կատարած չի կարող լինել:

Ժողովուրդը ստելով ես հասկանում եմ մի ազգ կամ մի երկրի ազգաբնակչութեան մասսաները, զանգուածները. և երբ ուզենանք գիտենալ մի ժողովրդի տրամադրութիւնը այս կամ այն ինկրի մասին, պիտի դիմենք պլեբիսցիտի՝ — արձատական միջոցը, որ կարող է ամենայն հարապատութեամբ երևան բերել ժողովրդի ներքին տրամադրութիւնը, բուն միտքը, ճշմարիտ կարծիքը:

Երբ այդպէս՝ ապա Հայ կեանքում գոյութիւն ունի մի մարմին, մի օրգան որ առաւել կամ նուազ ճշգրիտ կերպով կարող է արտայայտիչը լինել Հայ ժողովրդի հաւաքական տրամադրութիւններին, — դա միայն Հայ յեղափոխութիւնն է: Թէև նրա առաջ փակ է արքայական պալատները, իշխանական վիլլաները, հարուստների սալօնները, դիպլոմատների կաբլինեաները՝ որ և չկարողանան խկապէս գիտենալ հզօրների ներքին խորհուրդները, տրամադրութիւնները, բայց նրա առաջ բաց է բանուրի խուցը, անշպարի խրճիթը, տանջուողի նկուղը՝ որտեղ բոյսի փոխարէն թախիծը, ծիծաղի փոխարէն, լացն են թագաւորում, որտեղ դարբերի տառապանքն է ունում և տեղի է ունենում սոցիալական մեծ դրաման իր աղե-

խարշ տեսարաններով, զարհուրանքի ելեէջներով: Հէնց այդ կեանքից ճնտնդ առած և այդ կեանքը ապրող Հայ յեղափոխութիւնն է արտացոլում մասսաների կամքը, ցանկութիւնները, տրամադրութիւնները: Հայ սոցիալ յեղափոխութիւնն է տանջանքի աշխարհը ման գալիս, թափանցում զանգուածների հոգու խորքերը և կարողւմ նրա թագուն ծալքերում Հայ ժողովրդի տրամադրութիւններն ու մասածնանքները և դրանց նիւթական ու բարոյական պատուելաւորները արտայայտում ամենուրեք և համարձակ:

Առում է թէ եւրոպական դիպլոմատիան տրամադիր չէ Հայկական ինկրով դատուելու: Դա սխալ է:

Եւրոպական դիպլոմատիան, քաղաքական աշխարհի այդ իւր տեսակի արտայայտիչը էրբ է արեւելեան, մասնաւորապէս հայկական ինկրով դատուելու տրամադրութիւնը նախապէս բացայայտութիւն երևան բերել և պաշտօնապէս էլ յայտարարել ի գիտութիւն՝ որ այժմ էլ այդպէս վարուէր: Ո՞վ չգիտէ, որ եթէ բալկանեան պատերազմ չլինէր, այդ դիպլոմատիան չպիտի դատուէրներով դօնական, կղզիների և մանաւանդ ալբանական ինկրի մակեւ ոչ էլ Երբեակ Զինակցութեան դիւանագիտութիւնը պիտի սաստկապէս յուզէր ալբանական ինքնավար պետութեան գաղափարը. չէ՞ որ բալկաններում գոյակիծակը անխախտ էր յայտարարուած: Ո՞վ չգիտէ, որ եթէ Զինաստանում հասարակագիտութեան բէթիմ չհաստատուէր, ուստական դիւանագիտութիւնը չպիտի տրամադրուէր ստեղծելու անկախ Մօնղօլիա և ոչ էլ Բրիտանիան կարուկ լեզուով պիտի պաշտպանէր Դիբետի անկախութեան ծրագիրը:

Իրերի մի որոշ՝ խախտու թէ հաստատուն՝ դրութիւն քանի դեռ կայուն է, նրա հանդէպ Եւրոպան բռնած ունի մի որոշ դիրք, երբ այդ դրութիւնը դիւանագիտութեան կամքից անկախ փոխուած է և այդ կայունութիւնը թափահարութիւնների ենթարկուելով կործանուած և առաջ է բերում իրերի նոր դրութիւն, ոյժերի նոր յարաբերութիւններ՝ ապա և այդ պրօպետի հետ զուգահեռաբար փոխուած է իր դիրքը նա՛ և Եւրոպան, նրա դիւանագիտութիւնը և որոնում նոր դիրք՝ համապատասխան նոր դրութեան և իր շահերի:

Քաղաքականութիւնը պատմութիւն չէ ստեղծում, այլ պատմութիւնն է քաղաքականութիւն ստեղծում: Դիպլոմատիան չէ, որ ազգերի կեանքին ընթացք և ուղղութիւն է տալիս, այլ կեանքն է որ նրանց թօն ու բովանդակութիւն է տալիս: Դիւանագիտութիւնը՝ քաղաքական աշխարհում՝ միջազգային կնճռոտ խնդիրների գլխաւոր դատախազն է, որի կոչումը և պարտականութիւնն է պաշտպանել Եւրոպայի շահերը: Ենթադրենք թէ նա տրամադրութիւն ունի բուն թափով պաշտպանել իր պաշտպանութեան յանձնուած ենթակայի շահերը, բայց վերջինս չէ՛ տուժել կամ չէ՛ բողոքում, էլ ի՞նչպէս սուղարեգ իջնէ դիւանագիտութիւնը, քանի որ հրապարակ գալու շարժառիթներ չկան. կամ ենթադրենք թէ՛ նա տրամադրութիւն չունի, բայց հերթական խնդիրներ են երևան եկել, որոնց լուծումը անհրաժեշտ և հրամայողական պահանջ է. նա կարո՞ղ է զանց առնել եռացող խնդիրների քննութիւնն, առարկելով թէ տրամադրութիւն չունի դատուելու. նրա տրամադրութիւնը ոչ թէ իր կամքից է կախուած, այլ իր շահերի հասկացողութեան վրայ դրուած պարտականութիւնից, որից խուսափող տեղ չունի քաղաքական աշխարհում. նա կոչուած է եւրոպական բուրժուազիայի շահերը պաշտպանելու աշխարհի

այն բոլոր տեղերում, ուր նա տնտեսա-քաղաքական շահեր ունի. նա ճիշտագային շուկայում կապիտալիստ դասակարգի լիազոր ներկայացուցիչն է, որ պիտի պաշտպանե կապիտալիզմի շահերը, նրա փաստաբանը լինի այն ամեն տարրերի՝ երևոյթների և զրուծիւնների դէմ՝ որոնք բնական կերպով երևան է բերում սոցիալական կեանքի զարգացման օրէնքը, — ահա այդ է նրա պարտականութիւնը, նրա ծրարանքը:

Արդ՝ ոչինչ տարրիւնակ բան կայ, եթէ եւրոպական դիպլոմատիան տրամադրութիւն չունենայ հայկական խնդրով զբաղուելու. թէև այդ այդպէս չէ. այլ որ նա շատ բաւ տրամադրութիւն ունի ձեր խնդրով զբաղուելու, միայն թէ առիթներ է փնտրում: Բայց եթէ, իրօք, նա տրամադրութիւն չունի, ապա դա սպացուցանում է ոչ այլ ինչ, եթէ ոչ այն՝ որ հայկական բարձրաւնակից իր՝ եւրոպացի շահերի վտանգ չէ սպառնում ն երկայ ու ժ:

Կապիտալիստական կուլտուրայի այս տենդային շրջանում, ուժեղները տկարներին փրկելու, առողջները հիւանդներին բուժելու և կենդանիները ճեղքներին յարութիւն տալու ո՛չ ժամանակ ունեն, ո՛չ պարտականութիւն և ո՛չ էլ միտք կայ: Եթէ հայ ժողովրդի բազուկը չի փշրուել, եթէ նա առողջ և կենդանի է՝ ապա պիտի արտայայտուի, պիտի շարժուի ամէն կերպ:

Եւրոպական դիպլոմատիան չէ, որ իր պարտականութիւնն ու պաշտօնը համարի քաղաքական աշխարհում հայկական խնդիր չուղելու այդ պարտականութիւնը հայ ժողովուրդին է և այդ պաշտօնը հայ յեղափոխական կուսակցութեանը, որոնք եթէ չեն ուզում դաւաճանել իրենց առաքելութեանը, պիտի իրենց ոչօր նետեն Հայաստանի ազատութեան կուռի մէջ և այն ժամանակ դիպլոմատիան էլ առիթ, տրամադրութիւն կունենայ զբաղուելու հայկական խնդրով՝ որը յամառօրէն եւրոպական ընդհանուր բողախտութիւն առաջ բերելու տարրեր է ընդունում իր մէջ և ճիշտագային խաղաղութեան սպառնացող բնաւորութիւն ու ձևեր աւանում:

Եւրոպական բուրժուազիան չափազանց ջղային է դարցած, նրա տրամադրութիւնների արտայայտիչ բորսան՝ խիստ զգայուն, բաւական է որ ճիշտագային խաղաղութեան սպառնացող մի երևոյթ է ծագում աշխարհի ու է անկիւնում, դա անմիջապէս անզրադառնալով եւրոպացի տնտեսական և առևտրա-արդիւնաբերական կեանքի վրայ, խռովում է բուրժուական հասարակակարգի բարդ օրգանիզմը, խուճապ առաջ բերում, տակնուվրայութիւններ սպառնում: Եւ ահա անպատմելի արագութեամբ շառագունում է քաղաքական մթնոլորտը, բոլոր տարրերը ցանկանում և պահանջում են դիպլոմատիայից, որ նա շուտափոյթ ու կտրուկ միջոցներ ձեռք առնէ տնտեսական կեանքը՝ ճռայող երևոյթին բաւարար լուծում տալու հայկական խնդիրն էլ այդպիսի փոթորիկով երևոյթ է և հայկական շարժումն էլ փոթորիկով բնաւորութիւն ունի և հէնց այդ տեսակէտից է, որ այս շրջանում նա խիստ նըշանակալից պիտի լինի:

Բոլոր սուեանները վկայում են, որ հայկական խնդիրը կլուծուի իրերի փափուկ դրութեան շնորհիւ, եթէ առիթը ստեղծուի: Եւրոպական դիպլոմատիան կա՛մ պիտի թոյլ տայ հայերի բնաջնջումը Թիւրքիայում ու այդպիսով ազատուի հայկական ճղճաւանջից, և կա՛մ՝ պիտի փութայ լուծել՝ քանի դեռ նրա ալիքները չեն սպառնում եւրոպական կառաստրօֆի:

տեղիք տալ: Ահա այդ երկու միջոցով միայն, այս անգամ եւրոպան կարող է լուծել հայկական խնդիրը: Առաջին միջոցը, այն է՝ հայերի բնաջնջումը Թիւրքիայում—ինչոր բոլորովին չի կարող տեղի ունենալ, ո ովհետև քաղաքակիրթ մարդկութիւնը բնու թոյլ չի տալ, որ համաշխարհային այդ մեծ ուժիւրը կատարուի, նա մեր ազատութեան դատին համակիր է և որ եւրոպական մամուլը, մասնաւորապէս մեզ համար աւելի նըշանակութիւն ունեցող Ռուսաստանի հասարակական կարծիքը նպաստաւոր է մեր դատին. իսկ որ ամենագլխաւորն է՝ Ռուսաստանը այլևս չի հանդուրժիլ հայկական նոր կոտորածներ, և դիմու գորութեամբ վախճան կտայ ու փափալի Թիւրքիային իր հին մուրհակները վճարել, եթէ նոյն իսկ այդ պատճառով պատերազմի բռնուի ու է մեծ պետութեան հետ: Թող չը կարծուի թէ Ռուսաստանի կողմից Հայաստանի գրաւումը, Գերմանիայի կողմից պիտի ընդունուի՝ որպէս պատերազմի պատճառ. իսկ եթէ նա այդպէս ընդունուի և պատերազմի ձեռնոցը նետէ, Ռուսիան չի պիտի նահանջէ՝ այլ պիտի ընդունի մարտահրաւէրը: Ռուսիան քաջ գիտէ, որ Ռուսագերմանական պատերազմից ստացուելիք վնասը ամէն պարագայում աւելի ու աւելի քիչ պիտի լինի տնտեսական, քաղաքական և բարոյական շահերի տեսակէտից՝ քան այն, որ կարող է ստացուել Հայաստանի բնաջնջման հետևանքով՝ մօտ կամ հեռու ապագայում: Մահճեղական ճիւղացող արևելքում Ռուսաստանի բնական դաշնակից և հաւատարիմ յառաջապահը կարող է լինել, և է, միմիայն Հայաստանը, որի սպանուելուց վերջ Ռուսաստանը չպիտի կարողանայ այլևս արմատապէս խափանել Մարմարայից մինչև Հնդկաստան մի հզօրագոյն խաղաղական պետութեան զաղափարի ծաւալման ընթացքը, և նրա մարմին դառնալը ժամանակի խնդիր պիտի լինի: Կրօնական՝ որ դեռ մեծապէս ներգործում է միւլիւսմանների մըտածոնքների վրայ՝ քաղաքական և մասամբ ազգային հանգամանքների պատճառով, վաղ թէ ուշ, մնունդ պիտի առնէ եթէ ոչ միւլիւսմանական մի միացեալ պետութիւն, ապա խաղաղական կրօնա-քաղաքական դաշնակցութիւն, Թիւրքիայի, Իրանի, Աղանիստանի, Բելուճիստանի և Օմանի միջև: ակններև է որ այդ վիթխարի ոչօր պիտի սպառնայ Ռուսաստանի սահմանակից երկրներին՝ կիսամիւլիւսմանական Կովկաս, միւլիւսմանական Թիւրքեստան, Բուխարա, Խիւա և Հընդկաստանի միւլիւսմանական նահանգներին, և առաջին պատեհ պարագայում պիտի իր հին հաշիւները մաքրէ Ռուսաստանի հետ՝ ուր սպրում են աւելի քան տասն և հինգ միլիօն մահճեղականներ, մեծաւ մասամբ Թիւրք ցեղից:

Այս հանգամանքը շատ բաւ գիտեն, այս հեռանկարը շատ պարզ տեսնում են Ռուսաստանի թէ՛ պետական գործիչները և թէ՛ քաղաքական մտածողները: Եւ այդ ահաւոր հեռանկարի՝ երկիւղի պատճառով էլ Ռուսիան չպիտի վարանէ Գերմանիայի դէմ ճակատելու, եթէ դա անխուսափելի լինի: Բայց դժուար թէ Գերմանիան Թիւրքիայի ասիական գոյութեան համար այդպիսի մի քաջ անի. նրա բոլոր սպառնալիքը ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ իր բաժինն էլ սպահովել՝ քանի որ վաղօրօք հիւանդ մարդը պիտի մեռնի: Գրանում Գերմանիան էլ համոզուած է. իրենց ժառանգութեան բաժնի մասին է որ «Փատերլանդի» որդիները մերթ ընդ մերթ սպառնում են:

ՍԻՆՆԻՔ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐ

Ընկերային շարժումը յամբ, բայց անհատ յառաջնադասումով զարգանում է: Աշխատանքի և դրամագլխի հսկամարտութիւնը հեռոցհեռէ սուր արտայայտութիւն է ստանում և բանւորական հոծ գանգաձմերը՝ դասակարգային գիտակցութեամբ սողորելով՝ կեանքի աստարեզնի են իջնում:

Միացած քաղաքական ու տնտեսական հոգի վրայ, միջազգային բանւորութիւնը՝ իր կուս՝ մեթոդիք, կազմակերպութեամբ, իր ուժեղ ու ազատ կարգապահութեամբ՝ ամենուրեք անողոք կուս է ճղում՝ ճամնաւոր սեփականատիրութեան և ազատ ճրքման վրայ հիմնւած ներկայ ըէժիմի՝ դէժ, ձգտելով փոխարինել նրան համայնական սեփականատիրութեան իրաւակարգովը:

Ընկերային յեղափոխութեան այդ ահեղ շարժման դէժ կուսիւ համար, տիրող դասակարգերը՝ ճոռանալով իրենց երբեմնի յեղափոխական աւանդութիւնները, ռամկավարական իդէալները, կոչ են անում անցեալի յեղաշրջական ոյժերին և պահպանողական ճայրագոյն միջոցներով՝ աշխատում են պաշտպանել իրենց ընկերային աւանձնաշնորհումները:

Աերջացող ամիսը ընկերային շարժման տարեգրութիւնների մէջ երկու խոշոր անցքերով է արձանագրւելու: Առաջինը ա՛յն բուն բողոքի ցոյցը, որ Վոժժի երկու կողմերում արտայայտեցաւ և տակաւին արտայայտւում է զինւորականութեան դէժ, մի ցոյց, որի փայլուն վաւերացումը Ֆրանսիայում սոցիալականութեան Բրէտտի համագումարը եղաւ: Երկրորդ նշանակալից անցքը ա՛յն հսկայական ու վիթխարի գործադուլն էր, որ բովանդակ Քելզիան 10 օր շարունակ տնտեսական կտտարեալ կազմալուծութեան ենթարկեց:

ԲՐԷՍՏԻ ԶԱՄԱՅՈՒՄԱՐԸ

Համաձայն Լիժնի Համագումարի որոշման, Բրէտտի Համագումարը պէտք է կուսակցութեան ընդհանուր գործունէութեան ինդիկներով զբաղւէր: Պատրաստւած օրակարգի մէջ զինւորապէս աչքի էր ընկնում պետական տնտեսական մեշնաշնորհների հարցը, որը ներկայ համագումարը աւանձին էր կազմելու: Բայց, ստեղծւած քաղաքական բացաւրիկ կացութիւնը արգելք եղաւ ժողովին վարդապետական մեկնարկութեան այդպիսի հարցերով զբաղւելու: Զինւորական երեք-ամեայ ճառագութեան հարցը, որ գերազանցօրէն յետադիմական մի միջոց լինելով՝ ամբողջ ռամկավարական Ֆրանսիան յուզել ու վրդովել էր, — Բրէտտի Համագումարին ստիպեց նախապէս կազմւած օրակարգի վիճաբանութիւնը յետաձգել յաջորդ համագումարին և քննութեան առարկայ դարձնել միայն օրւայ հրատապ յիշեալ հարցը: Զուգադիպող նախարարական տաղնապն էլ և՛ս աւելի ստիպողական կարիք էր ստեղծում՝ ճշդելու սոցիալիստ կուսակցութեան զիբբը և պարլամէնտի, ճամուլի ու միտինգների միջոցով ուժգին պայքար մղելու զինւորական նախագծի դէժ:

Համագումարը բացեցաւ ճարտ 25-ին:

Շնորհաւորական հեռագրերի ընթերցումից յետոյ, գերմանական պատերազմը իստում է զինւորական չարիքի դէժ, հաւաստիացնելով Ֆրանսիայի ընկերներին, որ իրենք կը բուն թափով պիտի պայքարեն գերմանական զինւորական

նախադժերի դէժ: Քաղաքացի Բուբրէօյը, կուսակցութեան քարտուղարը, ներկայացնում է կաղճակերպական տեղեկագիրը, որից պարզւում է, որ կուսակցութեան անդամների թիւը վերջին ութ տարւայ ընթացքում կրկնապատկել է, այսինքն՝ 34,688-ից անցել է 68,903-ի: Անցեալ տարւայ համեմատութեամբ առաւելութիւնը բարձրանում է 5,246-ի:

Ժողովը այնուհետև անցնում է կուսակցութեան բիւջէի քննութեանը: Ստեղծւում են բուն վէճեր անհատական՝ գանազան տարաձայնութիւնների շուրջը, որանք դժբախտաբար, զուրկ են ու է Հասկան քնայթից:

Երկրորդ օրը, ժողովը ամբողջապէս նւիրւում է զինւորական երեքամեայ ճառագութեան հարցին:

Այս անգամ բախման պատերազմի անպատելի կրն էր, որ պատրակ ճառագեց կապիտալիստական Գերմանիային ու Ֆրանսիային սպառազինման մղեղին արշաւը կաղճակերպելու: Եւրոպական հասարակչութիւնը համարում էր, որպէս թէ, խախտւած: Սլաւական պետութիւնների յայթանակները Երբեակ նիդակցութեան ոյժերը տկարացնում էին դորացնելով Երբեակ Համաձայնութեան դիրքը, աււում էր արդ այդ հաւասարաչառութեան դիրքը պէտք էր դարձանել:

Եւ ահա Գերմանիան իրերի կուսիւնը վերահաստատելու համար, զինւորական հսկայ վարկեր է՝ առաջարկում և իր զինւորական ոյժը աւելցնել ուղււմ: Ֆրանսիան նկատելով, որ այդ բարբը՝ իբրև թէ իրեն դէժ են ուղււած, աճապարում է զինւորական երեք ամեայ ճառագութիւնը վերահաստատելու: Վիճաբանութիւնը անմիջապէս հետաքրքիր ուղղութիւն է ստանում:

Մարքսիստ Կոմպէր-Մօրէլը առաջարկում է ժողովին քրւււարկել իր բանաձևը, որ հետևեալն է. —

Համագումարը ընդունելով որ զինւորական դարգացումը և երեք տարւայ ճառագութեան քրււարկութիւնը հասարակութեան և միւս երկրների կողմից պիտի նրկատուեն ազգայնական ու հայրենամոլ մի քաղաքականութեան որպէս ակնյայտ ապացոյցներ,

Նկատելով, որ ազգային պաշտպանութիւնը սպահովելու միակ միջոցը ժողովրդական ընդհանուր զինւորման հաստատութիւնն է, որ զինւորական ճառագութեան ամեն մի նւաղումը մի քալ է դէպի այդ ուղղութեամբ, որ երիտասարդ զինւորների պահպանուցումը բնակութեան երկարացումը դրա բացասումն է,

Նկատելով, որ զինւած խաղաղութեան պատճառով առաջ եկած ճախսերը վտանգաւոր են ժողովրդի համար և մահացու հարւած տալիս ազգերի տնտեսական և ընկերային կեանքին, նկատելով, որ այդ ճախսերը կարող են զբաղել միայն այն դէպքում, երբ զարգացած ու ամրապնդւած հաշտարար առեանները կուժեն միջազգային ընդհարումները, որոնց անհետացումը կախւած է բուն խակ կապիտալիստական ըէժիմի անհետացումից:

Նկատելով, որ երկու մեծ ժողովուրդներ, ինչպէս են Ֆրանսիան և Գերմանիան, անկեղծ և հրամարտ-

կային մի Համաձայնութեամբ կարող են միաժամանակ ու Հաւատար չափով զինաթափութեան արդանշանը տալ:

Համագումարը շնորհաւորում է գերմանական և ֆրանսիական սօցիալիստ կուսակցութեանց միացեալ գործունէութիւնը և համերաշխում է արգաս-լորէնցի սօցիալիստների հետ, որոնք Ալգաս-Լօրէնի բովանդակող գաղափարութեան ըզմի թարգմանը հանդիսանալով յայտարարեցին թէ՛ ո՛չ մի գնով չեն ցանկանում մի «ըզման» (վրիժառութիւն) որ ֆրանսիացի ու Գերմանիացի մէջ պատերազմի տեղի պիտի տայ:

Յանձնարարում է պարլամէնտի սօցիալիստ խումբակին և կուսակցութեան վարիչ մարմինն, որ պարլամէնտում և երկրում ամենաբունն ու ամենավճռական գործունէութիւնը մղէ ֆրանքո-գերմանական համաձայնութեան, միջազգային հաշտարար ատեանների և ժողովրդական զինուորման համար և ընդդէմ երեքամեայ ծառայութեան օրէնքի դէմ:

Քաղաքացի Վայեանից յետոյ, որ պաշտպանում է այդ բանաձևը, խօսք է վերցնում Հերվէն, որ հայրենիքի և զինուորականութեան ծախն իր երբեմնի ունեցած ծայրայեղ ու յախուճն մտքերից հրաժարել է: 1)

Նա ասում է, որ ֆրանսիական ժողովուրդը այլևս «ըզման» ի կողմակից չէ և թէ արգաս լորէնցիները ներկայումս ցանկանում են միայն ինքնավարական մի ըէժիմ ունենալ գերմանական դաշնակցական պետութեան մէջ: Նա գտնում է, որ այդ ինքնավարութիւնը համապատասխան է յեղափոխական իրաւունքին և միակ լուծումն է, որ պիտի կարողանայ հարթել ներկայացած դժարութիւնները: Հէնց այդ պատճառով է որ նա այլևս չի պաշտպանում այն գաղափարը թէ՛ արգասիները ֆրանսիական ցեղային ծագում ունենալով՝ պէտք է միանան ֆրանսիային, իսկ Լօրէնի նահանգն էլ գերմանական լինելով՝ պիտի շարունակէ Գերմանիայի մասը կազմել: Նա հրաւիրում է պարլամէնտական մարմինն առաջարկել կառավարութեան, որ Ալգաս-Լօրէնի ինքնավարութիւնը իբր հիմք նկատելով՝ Գերմանիայի հետ մերձեցման բանակցութիւններ վարէ:

Երբ Հերվէին հարց է դրում թէ՛ եթէ Գերմանիան մերժէ ինքնավարութիւնը, ի՞նչ պէտք է լինի սօցիալիստների դիրքը, նա հետեւեալ նշանակալից պատասխանն է տալիս. —

— Ֆրանսիան, այն ժամանակ բարոյական ճնշող գերակշռութիւն կունենայ իր հակառակորդների վրայ և ես որքան էլ նազ ազգայնական լինեմ, գիտեմ թէ՛ ինչ պէտք է անել,

1 Երբ Հերվէն հրատարակեց «Նրանց չայրենիքը» անունով իր յայտնի գիրքը, Ժընևի մէջ «Սօցիալիստ» անունով թերթ հրատարակողները, ինչպէս եւ շատ ուրիշները, նրա մտքերը գուտ մարքսիստական եւ սօցիալիստական համարելով մի խօս արշաւանք սկսեցին դէպի շնչակեան Կուսակցութիւնը: Խնդրել այդ պատմական մասի հետ ծանօթանալու Համար, տեսնել Կուսակցութեանս հրատարակած «Սօցիալիզմ եւ չայրենիք» անունով գրքիկը: — Տարօրինակն այն է, որ այժմս երբ Հերվէն հրատարակել է իր երեքամի քարոզած արտաոտոց գաղափարները, սակայն նրա ներքինը հայ հերվէականները դեռ շարունակում են իրենց դժբախտական նիզակը ծծնելու: Խոք:

երբ մեր հարևանները յարձակում գործեն:

Այնուհետև խօսում է ֆրանսիստ ար Պրէսանսէն և իր փաստալից, տրամաբանական, յստակ ու հնուա ճառով մի ժամ շարունակ գրաւում է ժողովի ուշադրութիւնը, որ միաձայն որոշում է առանձին բրօշուրով հրատարակել:

Պրէսանսէն Հերվէի առաջարկը գտնում է անգործնական: Պուանբարէն կամ Պիշօնը չեն, որ գերմանական կառավարութեան այդ տեսակ դիմումներ պիտի անեն: Նրանք խաղաղութեան համար չարաբաստիկ պատգամաւորներ են միայն: Ալգաս-լորէնցիներն են, որ պիտի պահանջեն իրենց ինքնավարութիւնը:

Եւշաեղով զինուորական չարիքների վրայ, նա աւելացնում է, որ Գերմանիայի պատերազմական բիւռջէի և բանակի աճումը բնական հետևանքն է իր անտեսական բարեշրջման և ազգաբնակչութեան զարգացման, այնպէս որ ազգային արտադրութիւնը չի տուժում: Ֆրանսիայում, ընդհակառակը, երկրի անտեսութիւնը, բարոյական և մտաւորական անբողջ կեանքը քայքայում ու սպառում են զինուորական նոր միջոցների քւէարկութեամբ: Ֆրանսիան արտաքին վտանգի դէմ պաշտպանելու համար, միայն մի կարելի լուծում կայ, դա ժողովրդային զինուորումն է և ո՛չ թէ երեքամեայ զինուորական ծառայութիւնը:

Եւրոպական քաղաքականութիւնը վերլուծելով, Պրէսանսէն գտնում է, որ բարկանեան պատերազմը միջազգային հաւասարակշռութիւնը խախտել է ի վնաս Աւստրիայի և Գերմանիայի: Բայց եթէ քաղաքական այդ փոփոխութեան հետևանքով խաղաղութիւնը վտանգւում է, հաշտարար ատեանները նրա կարծիքով, կարող են ծագող դժարութիւնները լուծել: Միջազգային բարդութիւնների ժամանակ այլևս բիրտ ոյժը պէտք է դադարի դեր խաղալուց: Տևական և պարտադիր խաղաբար ատեանները հարցի բաւարար լուծումը պիտի տան: Այդ ուղղութեամբ արդէն մի շարք խրախուսիչ փաստեր կան, ինչպէս են, օրինակ, Լահէի դատարանը, որ դեռ սահմանափակ իրաւասութիւն ունի, անգլօ-գերմանական նաւային ծախսերի նւազեցման համաձայնութիւնը, Միացեալ-Նահանգների ընդհանուր սպառազինութեան սահմանափակման պոթիւ ներկայացրած առաջարկը, և այլն, և այլն:

Պրէսանսէն աւարտելով իր ճառը խանդավառ ծափերի մէջ յիշատակում է և՛ այն իրողութիւնը, թէ այսուհետև սօցիալիստ կուսակցութիւնը ազատութեան, ռամկավարութեան, խաղաղութեան և քաղաքակրթութեան միակ անկեղծ ախոյեանը և պաշտպանը հանդիսացող կուսակցութիւնն է:

Ժողովը այնուհետև քւէարկում է Կոմպէր-Մօրէլի բանաձևը և անցնում է հերթական զանազան հարցերի քննութեան, որից յետոյ նիստը ցրւում է «Միջազգայնական» ի հերոսական շէշտերը հնչեցնելով:

Բրէստի Համագումարին զուգադիպում էր մի այլ կարեւոր ժողով, որ իր ծանր որոշումներով ու անմիջական հետևանքներով ահագին նշանակութիւն պիտի ունենար բանուորութեան համար: Դա Բելգիայի սօցիալիստական համագումարն էր, որ ազգային կոմիտէի առաջարկութեան վրայ՝ ընդհանուր գործադուլի հարցին էր քննելու:

Երկար ժամանակից ի վեր, Բելգիայի սօցիալիստ կուսակցութիւնը պահանջում է ընդհանուր և հաւատար հանրաբէ,

բայց իր անբողջ ջանքերը անցել էին սպարդին: Կաթովիկ կղերական կառավարութիւնը անողոք ու անդրելի էր:

Չնայած այն իրողութեան որ Բեղլիայում 25 տարուց ի վեր գոյութիւն ունի Համեմատական ներկայացուցչութեան սխառեճը, այնուամենայնիւ, ժողովրդական կամքի արտայայտութիւնը սեղմած է ընտրական որոշ սահմանափակումով, որ է՝ բազմաբէն (vote plural): Այդ բէն կայանում է նրանում, որ ընտրողներ ձի դասակարգութեան տրուած է ձի քանի՛ ձայն փոխանակ ձէկի, Համաձայն նրանց Հարստութեան, ստացած կրթութեան, և այլն: Այդ օրէնքը Բեղլիայում գոյութիւն ունի 1893-ից ի վեր: Իւրաքանչիւր 25 տարեկան քաղաքացի, Համաձայն այդ օրէնքի, ունի ձի ձայն: յաւելածական ձայն տրուած է աւաջին նրան, որ Հարուստ կալածատէր է, մեծ ճարտարապետ կամ վաճառական է, երկրորդ՝ ամեն ձի 25 տարեկան մարդու, որ որոշ Հարկ է վճարում և օրինական սերուն մեծի: Հասարակական պաշտօնեաները և կրթական բարձրագոյն սակ ունեցողներն էլ երկու յաւելածական ձայն է տրուած:

Շատ պարզ է, որ այդ սխառեճի կիրառութեամբ միայն բուրժուազիան է, որ քաղաքական իշխանութեան մէջ առաւելակշիռ ձայն պիտի ունենայ, որովհետև բանւորութիւնը անկարող է ներկայացնել վերոյիշեալ պայմանները:

Ժողովրդական միահեծանութեան այդ ճիշտ սխառեճի դէմ, ուրեմն, ծածուկի ու պարլամենտի մէջ սօցիալիստ կուսակցութեան թափած ճիգերը չկարողացան ցնցել յետողէմ կառավարութիւնը: Իրերի այդ դրութեան մէջ, Համագումարը գտնուած էր, որ այսուհետև գործաւոր դասակարգի Համար կուի գերագոյն միակ միջոցը ընդհանուր գործադուլն էր:

— Մինչև այժմ, ասում է սօցիալիզմի բեղլիական վէտերան Վանդերվելը, մեզ ծաղրանքով ու հեղինակնքով պատասխանեցին: Որպէսզի ընդհանուր գործադուլը կարողանամ խնայել երկրին ու գործաւոր դասակարգին, նա ամիս շարունակ ես փորձեցի անել այն ինչ որ մարդկօրէն ու գերմարդկօրէն Հնարաւոր էր: Մեր Հակառակորդները, սակայն, մնացին անդրդուելի և կուզէն ոչինչ լսել, ոչինչ շնորհել: Այժմ ամենայն ինչ վերջացած է: Ասում է թէ՛ ով որ հողմ է ցանում, փոթորիկ է հնձում: Փոթորիկի ժամը հիմա հնչել է, վայ կղերականներին:

Եւ փոթորիկը պայթեց Համագումարի նշանակած օրը, ապրիլ 14-ին: Գործաւոր դասակարգը, որպէս մի կամք, մի հոգի հրաշալի կարգապահութեամբ պատասխանեց գործադուլի կոչին: Եւ առաջ եկաւ դասակարգային գիտակցութեան այն սքանչելի ու վեհ ցոյցը, որ գործաւորական տարեկրութիւնների մէջ անջնջելի ու անմուսաց մի օրինակ կմնայ 500,000 գործաւորներ, ի գին նիւթական և բարոյական ամէն զոհողութեան, հերոսաբար ճակատեցին բուրժուակղերական բռնկի դէմ:

Եւրոպական ծածուկի բոլոր օրգանները, անխտիր, հիացմունքով արտայայտեցան քաղաքական այդ ահեղ շարժման մասին, որ սկզբից մինչև վերջը ընկերային խաղաղութիւնը վրդովող ո՛չ մի միջադէպի տեղի տուց:

Տեղի սղութիւնը, դժբախտաբար, մեզ չի ներում գործա-

դուլի նկարագրական մանրամասնութիւնների մէջ մանկու: Այսքանը ասենք միայն, որ իր կազմակերպութեամբ ու ծաւալով նա ստացաւ Համաշխարհային պատմական նշանակութիւն և օտար երկրների գործաւորները միջազգային Համերաշխութեան իրենց պարտականութիւնը լիովին կատարեցին:

10 օրուայ փառահեղ կռիւց յետոյ, ապրիլ 24-ին պարլամենտը լուեղեացն բաւարարութիւն է տալիս գործաւոր դասակարգի պահանջներին: Ազատամիտ կուսակցութեան անդամ, պրն. Մասսօնի բանաձևը Համարեա միաձայնութեամբ քուարկուած է: Ըստ այդ բանաձևի, ընտրուած է պարլամենտական մի յանձնախումբ, որ վերաքննելով Համարձ նահանգային ու Համայնական ընտրական եղանակը, կարող է ուսումնասիրել նոյնպէս օրէնսդրական ընտրական խնդիրը և այդպիսով պատրաստել սահմանադրութեան վերաքննութիւնը:

Հակառակ այդ բանաձևի մասին նպատակաւոր կերպով տրուած գնահատման մեկնաբանութեանց, աւելի քան պարզ է, որ գործաւոր դասակարգի ջանքերը յաջողութեամբ են պսակել: Ոչ մի կառավարութիւն երբէք չի խոստովանել, որ ինքը պարտութիւն է կրել: Ձիջումների քաղաքականութիւնը միշտ քօղարկել է դիւանագիտական երկրի մի դարձածքներով:

Պարլամենտի այդ քուարկութիւնից յետոյ, սօցիալիստ կուսակցութիւնը նկատելով, որ գործադուլը այլևս ծանուած է վերջնական փուլի մէջ, արտակարգ Համագումար նշանակեց ապրիլ 24-ին, ուր Վանդերվելը և Դեստրէի բացատրական ճառերից յետոյ, միաձայն հաւանութեամբ որոշուած է վերսկսել աշխատանքը:

— Ի՞նչ էինք ակնկալում մենք, եթէ ոչ վերաքննութեան հարցը, ասում է Վանդերվելը: Դա այժմ արդէն իրականացած է և մենք ծամուկեցելու ենք ընտրելիք յանձնախմբի աշխատութիւններին:

Յանձնախմբի աշխատութիւններից պիտի բղխի վերաքննութիւնն ու հանրաքուէն: Ահա թէ ինչ են եղել քաղաքական ու պարլամենտական արդիւնքները:

... Մայիսի մէկը, վերջացնում է նա, այս տարի զուգորպում է Համբարձման տօնին: Քիստոնեաները տօնելու են ասուած դարձած մի մարդու երկիրը: Համբառնալը, խիկ մենք պիտի ողջունենք արդարութեան ձգտող գործաւոր դասակարգի յաղթական բարձրացումը:

Մ Ա Յ Ի Ս Մ Ի Վ Ի

Մայիս մէկը... դա միջազգային գործաւոր դասակարգի տօնն է, որով նա ընկերային բարօրութեան ու երջանկութեան իր յեղափոխական իղէայն է արտայայտում կապիտալիստ, առանձնաշնորհեալ դասակարգի հանդէպ:

Տարւայ այդ գեղեցիկ օրը, երբ արեւ կենտառու ճառագայթները նոր շունչ ու կենսունակութիւն են պարգևում բոլոր էակներին, երբ բնութեան մէջ ամէն ինչ ծաղկում, փթթում է գարնանային անոյշ գեփիւռի աղղեցութեան տակ, — տառապանքի ու տանջանքի զոհերն էլ լաւագոյն կենցաղի, լաւագոյն սպազայի իրենց պահանջներն են ներկայացնում: Նրանք ևս ցանկանում են իրենց մասնակցութիւնը ունենալ Հայկերոյթին և ճաշակել այն բոլոր բարիքները, որ անհրաժեշտօրէն կապուած են մարդկային ֆիզիքական, բարոյական

և ճատարական գոյութեան հետ:

Մայիս մէկը . . . Դա բոլոր հարստահարածներին, զրկածներին ընդկրածի օրն է, երբ նրանք հրապարակային ցոյցերով ու ծիսակնքներով բողոքում են ճարդը ճարդու ձեռքով շահագործման, — բարբարոս լէժիմի դէմ և պահանջում, որ արտադրութեան գործիքները հաւասարապէս պատկանեն ամենաքին և ամենքն էլ անբողջապէս վայելեն իրենց աշխատանքի արդիւնքը:

Մայիս մէկը . . . Դա նոյնպէս աշխատաւոր ճարդկութեան նազարդոյն պահանջների օրն է, երբ նա տիրող դասակարգից պահանջում է հաստատել Տ ժամեայ աշխատանք և ա ն գ լ ի ա կ ա ն շ ա բ ա թ՝ արդիւնաբերական կեանքի բոլոր ճիւղերի համար:

Մայիսի մէկը բողոքի օրն է նաև կապիտալիզմի զինուորական կազմակերպութեան դէմ, որ իր յարածուն սպառազինութեամբ և ահուելի բիւռջեով՝ քայքայում, խորտակում է ժողովրդի ֆիզիքական ու նիւթական ամենակենսունակ ոյժերը:

Եւ յեղափոխական այդ նշանակալից օրը տօնում է երկրագնդի բոլոր ճատերում, սկսած հեռաւոր Ամերիկայից մինչև հիւսիսային Սիբերիա և Մայրագոյն Արևելք, ամեն տեղ ուր կապիտալիստական արտադրութեան եղանակը՝ խորտակելով աւատական անտեսութիւնն ու սեփականութեան ձեւերը, ստեղծել է ճատաւոր սեփականատիրութեան ու վարձաւորութեան կարգերը, որոնց հետևանքով ընկերութիւնը բաժանւած է երկու դասակարգերի՝ շահագործող՝ և շահագործւող:

Սօցիալիզմի իդէալներով սոցիալիստները աշխարհն է, որ պատմական այդ թւականին գլուխ է բարձրացնում հին աշխարհի ճեղքացած լէժիմի դէմ . . .

Այս տարի հակառակ այն իրողութեան, որ մայիս մէկը զուգարկապէս չաճարձման տօնին, այնուամենայնիւ ամբողջ Եւրոպայում գործաւոր դասակարգը իր ուժովն ու ազդու բողոքը հնչեցրեց պատերազմի և սպառազինութեան դէմ:

Փրանսիայում զինուորական երեքամեայ ծառայութեան դէմ մղւած պայքարն էր, որ պլատֆորմ ծառայեց մայիս մէկի ցոյցին: Ընդհանրապարտական բոլոր կեդրոններում գործաւորները ծիսակնքներ ու թափօրներ կազմակերպեցին:

Գերմանիայում մայիս մէկի ցոյցը կազմակերպեցու գորավաշտերի բազմացման և զինուորական նոր վարկերի օրինագծի դէմ: Ոստիկանութեան և ցուցարարների մէջ ընդհարում պատահելով՝ բազմաթիւ սպանւածներ ու վիրաւորւածներ են եղել: Համբուրգում 100,000 գործաւորներ թափաչ են կալձել և շրջել փողոցներ:

Աւստրիայում, բալկանների հանդէպ կառավարութեան բռնած վտանգաւոր քաղաքակնութիւնը մեծ յուզում էր առաջ բերել գործաւորների մէջ: Սօցիալիստ կուսակցութիւնը բաց էր թողել մի ազդու կոչ:

Մայիս մէկը հանդիսաւոր կերպով տօնւեցաւ և՛ Անգլիայում, Բելգիայում, Սպանիայում և միւս երկրներում:

Եւրոպական զինուորական յետաշրջման դէմ ներկայ Մայիս Մէկը ժողովրդական ընդհանուր ըմբոստութեան ու բողոքի փայլուն արձագանքը եղաւ:

Ե. ՍԱՅՕ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՈՐԳ «ՀԻՒԱՆԴ ՄԱՐԿԸ»

Քաղաքական մռայլ հորիզոնը պայծառացաւ մասամբ Եւրոպական ընդհանուր բողոքաւում գոլժող սև ամպերը փարատեցան առժամապէս՝ իր պարտութեանը մէջ անդամ յաղթական Մօնթէնէկրօյի անձնատուութեամբը վեց մե՛ծ պետութիւններուն: Բիրա ոյժը անգամ մըն ալ յաղթող հանդիսացաւ Իրաւունքի և Արդարութեան վրայ: Լօնտօնի դեպանախարհրդի անդամները կը հրճին այժմ, որ իրենց զիւանազնական ջանքերը այսպիսի «փայլուն» վախճան ունեցաւ: Կը հրճւի մասնաւորապէս Աւստրօ-Հունգարիան, Եւրոպայի այդ երկրորդ «Հիւանդ Մարդը», որ թրքօ-պալքանեան պատերազմի սկիզբէն ի վեր, գայթակղութեան քարի մը պէս կը զարնւի Եւրոպական ներդաշնակութեան հինգ անդամներուն և Պալքանեան դաշնակից պետութիւններուն ստրեբուն: Ամբողջ համագերմանական աշխարհը կը տօնէ սրվականութեան վրայ գերմանականութեան տարած այս «Մեծ Յաղթանակը» և կօրօրւի այն քաղցր յոյսով թէ՛ Հապսուրգեան գահոյթին սպառնացող վտանգը անցաւ այլևս, և հիմա, այդ ծակաչք գերդատմանը, առանց քունը հարած ընելու, կրնայ մարտել թրքական կարկանդակէն իրեն բաժին հանած արլանական իւրոտ պատառը: Մէկ ոտքը արդէն գերեզման իջած Փրանսուս-ժօզէֆը՝ ձեռքերը շփելով՝ փառք կուտայ Ամենակալին, որ անդի աշխարհք չուիէ առաջ վառօղի հոտը անգամ մըն ալ չափաի հասնի իր կայսերական քթին և խոռովէ Լեհաստանի ու Պօնու-Հէրցեքի ոճիրներով արիւնաբոյր ու յանցապարտ իր խիղճը:

